№ 149 ԿԻՐԱԿԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4 — 1907 — ԿԻՐԱԿԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4 № 149

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՕՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐԸ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ ԱՐԺԷ

ԵՐԿՈՒ ռուբլի

Մի ամսվայ համար 1 ռուբլի

Առաջիկայ երեքշաբթի

ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ

ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՑ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ

ԹԱՂՈՒՄԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյն օրը տեղի կունենայ հոգեհանգիստ Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցում։

(Կ. Ե.) 2—1

Այսօր, կիրակի, Վանքի մայր եկեղեցում

ՆՇԱՆԱԿՎԱԾ Է

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Մահվան առիթով

Եղբ. Մելիք-Մարութեանների

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

ԵՂԲ. Խ. և Մ. ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՆԵՐԻ

յայտարարում է՝ի գիտութիւն յարգելի վաճառականների, որ նրա Մոսկվայի խանութում վաճառվում են մեծ քանակութեամբ ԳԱԼԱՆՏԵՐԷՅՆԻ զանազան ապրանքներ։ Գները շատ մատչելի են։ Պատուէրները կատարվում են անյապաղ և ամենայն ճշտութեամբ։

Հասցէն՝ МОСКВА, Никольская улица, домъ графа Шереметьева, Торг. домъ

„Бр. Х. и М. Меликъ-Марутянцъ“

(Հ. Կ.) ա. 15—2

Առեւտրական տուն

«ՅՈՒՉԱՐԱՐ»-ի բովանդակութիւնը տես 4-րդ երեսում։

ռաջ բերեց ժողովրդի մէջ իր խօսքով ու գրչով, յիշվում են երախտագիտութեամբ այն ժողովրդի կողմից, որի համար նա գործել է։

Միևնոյն ժամանակ Վաղարշապատում խռնված բազմութիւնը ժողովվել է թաղելու նաև Էջմիածնի կաթողիկոսական աթոռի Դահակալին, որ տասնեւչորս տարի շարունակ եղել է հայ լուսաւորչական հոգևոր հօտի պետը։

Կաթողիկոսական աթոռը թափուր է մնացել, և առաջին հոգսերից մէկը, որ ասպարէզ կը գայ կաթողիկոսի թաղումից յետոյ, կը լինի այդ աթոռի համար նոր՝ արժանաւոր դահակալ գտնելը և ընտրելը։

Մենք ամենեին մտադիր չենք ներկայումս յայտնել խորհրդածութիւններ այդ հերթական խնդրի մասին։ Դրա համար մենք ունենք ժամանակ և ուրիշ յարմարութիւններ ապագայում։ Այժմ, քանի որ Հայրիկի աճիւնը դեռ չէ յանձնված հողին, պէտք է հոգանք արժանաւորապէս և վայելչագոյն եղանակով կատարելու վերջին պարտաւորութիւնը։ Անշուշտ, Էջմիածնում այդ հոգացողութիւնը կը բռնի առաջին տեղը։ Բայց չենք կարող միևնոյն ժամանակ ուշադրութեան չառնել այն կարևոր հանգամանքը, որ Էջմիածնում ժողովված պատգամաւորները և ներկայացուցիչները այնտեղ չեն մնալու և Հայրիկի թաղումից յետոյ իսկոյն ցրվելու են զանազան կողմեր։

Իսկ յետոյ գումարվել խորհրդակցութիւնների համար շատ դժուար կը լինի։ Ուստի նպատակայարմար կը լինէր, օգտվելով դէպքից, մտքի փոխանակութիւն կատարել և խորհրդակցութիւններ կազմել մի քանի կարևոր խնդիրների մասին, որոնք կապված են կաթողիկոսութեան, Էջմիածնի գործերի բարեկարգութեան և առհասարակ մեր ժողովրդական կարիքների հարցերի հետ։

Այդպիսի խնդիրներից մէկն է, օրինակ՝ այն, թէ արդեօք չէր կարելի ընդարձակել կաթողիկոսական թեկնածուների ցուցակը և նրա մէջ մտցնել նաև վարդապետների անունները։ Գուցէ աջողվի իրականացնել ընտրութեան այդ եղանակը և այդպիսով հնարաւորութիւն տալ հայ ժողովրդին աւելի լաւ ընտրութիւն անելու կաթողիկոսական գահի համար։

Երկրորդ խնդիրն է թիւրքահայերի իրական մասնակցութեան խնդիրը կաթողիկոսական ընտրութեան գործում։ Կարևոր է հարթել ճանապարհը և վերացնել այն խոչընդոտները, որոնք դժուարացնում են թիւրքահայ ներկայացուցիչների մուտքը Կովկաս և մասնակցութիւնը ընտրութիւններին։

Երրորդ խնդիրն է հայ ժողովրդի ներկայ տնտեսական տագնապը, որ հալումաշ է արել ժողովրդին և սպառնում է սովամահ անել շատ շատերին։ Պէտք է աշխատել կազմակերպելու ընդհանուր դիմում Փոխարքային, որպէսզի կառավարութիւնը բաց թողնի զանձարանից խոշոր գումար կարօտեալ ժողովրդին հաց հայթայթելու։

Չորրորդ խնդիրն է ժամանակաւոր միջոցներ ձեռք առնել ապահովելու հեմարանի գոյութիւնը և բարեկարգելու Էջմիածնի գործավարութիւնը տեղակալութեան օրով՝ մինչև հաստատվի կարգ ու կանոն Էջմիածնում։

Հինգերորդ՝ նախահոգացողութեամբ որոշել այն պատասխանատուութեան սահմանները, որ ծանրանում է Էջմիածնի վրա կրթական, կալուածական և ուրիշ կարևոր խնդիրների օրէնսդրական ձեւակերպութեան վերաբերութեամբ։

Մենք առաջ չենք բերում բազմաթիւ ուրիշ խնդիրներ, որոնք նոյնպէս էական են, բայց դեռ կարող են սպասել իրանց մշակման ու լուծման կամ կարող են կարգադրվել փոքր ի շատէ բաւարար կերպով և մասնաւոր խորհրդակցութիւններով։

Անշուշտ Էջմիածնում ժողովված մարդիկ լիազօրութիւններ չունեն պաշտօնական քայլեր անելու համար, բայց նրանք կարող են մտքերի փոխանակութեամբ ու խորհրդակցութիւններով պարզել շատ հերթական խնդիրներ և հող պատրաստել նրանց բաւարար մշակութեան և լուծման համար։

Այդ կարևոր է։

Ա. Քալանթար

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Էջմիածին, 3 Նոյեմբերի 3 ժ. 27 ր.

Այսօր, ժամը 3-ին, տեղի ունեցաւ վեհափառ կաթողիկոսի մարմնի յուղարկաւորութիւնը դէպի տաճար։

Ներկայ էին տեղական ժողովուրդը և եկեղորներ։

Պատրաստում են բնակարաններ եկողների համար։

Կը թաղեն Ներսէս կաթողիկոսի գերեզմանի մօտ։

Դանիէլեան

—

Երէկ, ցերեկվայ ժամը 3-ին, Էջմիածին ուղևորվեց Գարեգին արքեպ. Սաթունեան։

—

Թիֆլիսում ապրող պարսկահպատակ մահմեդականները երէկ կազմեցին մի ժողով և որոշեցին ուղարկել իրանց կողմից երկու հոգի Էջմիածին, իբրև պատգամաւորներ ներկայ լինելու կաթողիկոսի թաղման։ Նրանք տանում են իրանց հետ պսակ, որի ծապաւէնի վրա կը լինեն պարսկերէն և հայերէն մակագրութիւններ—«Թիֆլիսի պարսկահպատակ մահմեդականներից հայոց գորովագութ Հայրիկին»։

—

Ուրբաթ, նոյեմբերի 2-ին, երեկոյեան ժամը 7-ին, առաջնորդարանում կայացաւ Թիֆլիսի հայոց եկեղեցական-ծխական հոգաբարձութիւնների ժողովը, որ լսելով առաջնորդի առաջարկը՝ որոշեց 1) ուղարկել Էջմիածին մի պատգամաւորութիւն, բաղկացած պ.պ. Յովսէփ Խունունցից, Իսահակ Յարութիւնեանից և Մարգարեանից, ներկայ լինելու կաթողիկոսի թաղման և մի արծաթեայ պսակ դնելու ծխական դպրոցների կողմից, 2) պահել ամեն մի ծխական դպրոցում 2—3 թոշակաւորներ չքաւոր սաներից ի յիշատակ Խրիմեանի։

—

Ս. Նշանի ուսումնարանի մանկավարժական խորհուրդը ուղարկել է հետևեալ հեռագիրը.

«Էջմիածին, Խաչիկ Սամուէլեանին.

«Սուրբ Նշանի իգական դպրոցի մանկավարժական մարմինը, իբ խորին ցաւակցութիւնը յայտնելով Հայրիկի մահվան առիթով, խնդրում է ձեզ մեր լիազօրը լինել թաղման հանդիսին։

Վարդանեան, Տէր-Յարութիւնեան, Խանազատեան, Սախաթեան, Լազարեան, Ղարաջեան, Աթանասեան։

—

Թիֆլիսի 79-դ հետևակ Կուրինսկի զօրախմբի մէջ ծառայող Նոր-Նախիջևանցի հայ զինուորները, թւով 65 հոգի, խնդրել են պ. Հ. Առաքելեանին իրանց կողմից հրաժեշտի մի քանի խօսք արտասանել կաթողիկոսի դագաղի վրա և պսակի համար իրանց մէջ հաւաքած գումարը՝ յատկացնել սովեալներին։

—

Ուրբաթ, նոյեմբերի 2-ին, ժողովարանի անդամների ընդհանուր ժողովում պ. Կ. Շիրինեանը առաջարկեց.

1) Յարգել հանգուցեալ վեհափառ հայրապետի յիշատակը ոտքի կանգնելով։

2) Ընտրել և ուղարկել Էջմիածին պատգամաւորներ ժողովարանի կողմից թաղման հանդէսին ներկայ լինելու։

3) Վճռել մի գումար (500 ր. կամ աւելի) Հայրիկի անուան հիմնվելիք ֆոնդին յատկացնելու։

Ժողովականները ընդունեցին առաջին և երրորդ կէտերը՝ յանձնելով աւագների խորհրդին թէ ինչ գումար յատկացնել և որպիսի գործադրութիւն տալ, իսկ թաղման ներկայ լինելու պատգամաւոր ուղարկելն աւելորդ համարեցին։

Մենք ստացանք Եւպատորիայից հետևեալ հեռագիրը նոյեմբերի 3-ին.

Եւպատորիայի Հայոց Բարեգործական ընկ. վարչութիւնը խորին և անկեղծ վիշտ է արտայայտում ամենայն հայոց կաթողիկոս սիրեցեալ Հայրիկի, գրչի և մտքի մշակի, մահվան առիթով։

Բախալեան, Քուշներեան, Խաչիկեան, Նաշունեան, Նեմցեան, Թումանեան։

—

Եւպատորիայից հեռագրում են մեզ.

Եւպատորիայի հայ հոգաբարձութիւնը, իր խորին վշտակցութիւնը յայտնելով ամենայն հայոց կաթողիկոսի մահվան առիթով, անկեղծօրէն ցանկանում է հայ հոգևորականութեան, որ ապագայ յաջորդը Հայրիկի բարեհորոգումների շարունակողը լինի։

Կաշկթակեան, Քուշներեան, Բալաշեան, Խաչիկեան, Բօղարջեան։

—

Սղնախից մեզ հեռագրում են.

Սղնախ քաղաքի հայ ազգաբնակութիւնը իր խորին ցաւակցութիւնն է յայտնում ի Տէր հանգուցեալ ամենայն հայոց կաթողիկոս Հայրիկի մահվան առիթով։ Տեղումս կատարվեց հանդիսաւոր հոգեհանդիստ։ Մեր վիշտը արտայայտելու և պսակ դնելու ընտրեցինք պ. Սարգիս Տէր-Գրիգորեանին՝ թաղման հանդիսին մասնակցելու համար։

—

Նոր-Բայազէտ, 31 հոկտեմբերի

Երէկ, հոկտեմբերի 30-ին, ամենայն հայոց կաթողիկոսի բոթաբեր լուրը վաղ առաւօտեան կայծակի արագութեամբ տարածվեց քաղաքում, ուր հեռագիրը ստացվել էր գիշերը։ Եկեղեցու զանգերը տխուր, մելամաղձիկ կերպով զողանջում էին։ Մօտ ժամը 10-ին անագին ժողովուրդ հաւաքվեց ս. Աստուածածնի մայր եկեղեցում, ուր կատարվեց առաջին հանդիսաւոր հոգեհանգիստը։ Գեղարդը շրջապատել էին, բացի ինտելիգենտ հասարակութիւնից, բոլոր դպրոցների աշակերտ-աշակերտուհիները իրանց ուսուցիչների և ուսուցչուհիների հետ։ Մաղթանքին ներկայ էին նաև գաւառապետը և զինուորական ատեանի ամբողջ կազմը, որ այդ բոլորին նիստ ունէր՝ նորակոչ զինուորների ընտրութեան վերաբերմամբ։ սակայն լսելով վեհափառ Հայրիկի մահվան առիթով կատարվող հոգեհանգստի մասին, զինուորական ատեանը դադարեցրել էր իր գործունէութիւնը մաղթանքի ընթացքում և ներկայացել հանդիսին։

Հոգեհանգստի վերջում գործակալ հայր Մուրադբէգեան մի կարճ և ամփոփ քարոզի մէջ ցաւակցութիւն յայտնելուց յետոյ՝ հրաւիրեց իր մօտ քաղաքային վարչութեան անդամներին ուսագի և իր օգնականի հետ, մասնակցութեամբ հոգաբարձութեան և այլ պատուաւոր անձանց, խորհելու թէ ինչ միջոցներով քաղաքը կարող է մասնակցել վեհափառի թաղմանը, թող թէ հոգեհանգիստները կը կատարվեն շարունակ մինչև թաղման օրը։ Ժողով կայացնելով Խորէն հայր-սուրբի նախաձեռնութեամբ՝ մեր քաղաքացիները պատգամաւոր ընտրեցին պ. Հայկարամ Տէր-Միքայէլեանին, որը ուրբաթ, նոյեմբերի 2-ին, պէտք է մեկնի Էջմիածին՝ ներկայ լինելու ամենայն հայոց վեհ. կաթողիկոսի թաղման հանդէսին։

Գ. Սինանեան

—

Հոկտեմբերի 31-ին առաւօտից Բագուի հայոց տաճարը, եկեղեցու բակը, Պարապէտը և նրա շրջակաները սկսեցին լցվել ժողովրդով։ 12 ժամվայ մօտերին հաւաքվեց ամենաքիչը մօտ 20,000 մարդ։ Զը նայելով ժողովրդի մի այդպիսի բազմութեան, օրինակելի կարգ էր պահպանվում։ Պատարագ մատուցեց և ապա հոգեհանգիստ կատարեց ամբողջ հայ հոգևորականութեան հետ միասին Անանիա արքեպիսկոպոսը։ Հոգեհանգստին ներկայ էին Բագուի քաղաքապետ գեներալ-մայոր Մ. Կոնէվսկին, ոստիկանապետը, աւագ քահանայ Իւնիցկին, մահմեդականների դաշին, հրէական բարբին, քաղաքագլուխ Ն. Բաեվսկին դումայի ամբողջ կազմի և վարչութեան հետ միասին, օտար պետութիւնների հիւպատոսները, քաղաքի պատուաւոր անձինք, թէ քրիստոս-

«ՅՈՒՉԱՐԱՐ»-ի բովանդակութիւնը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջմիածնում. Կաթողիկոսի մահվան առիթով. Վերջին տեղեկութիւններ. Կաթողիկոսի վերջին օրերը և մահը. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Պետական Դուման. Պետական խորհուրդ. Երրորդ Դումայի կազմը. Կուսակցութիւնների կեանքից. Տեղեկութիւններ գաւառից. Թարգմ և երաժշտութիւն. Ներքին լուրեր. Նամակներ խմբագրութեան. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Արտասահմանեան թուղթներս. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Խրիմեան Հայրիկի թաղմանը ներկայ լինելու համար Էջմիածին են գնում զանազան տեղերից բազմաթիւ պատգամաւորութիւններ։

Ժողովրդի ներկայացուցիչները գնում են հոգին յանձնելու Հայրիկին, որ վաթսուն տարուց աւելի մի մեծ շրջանում գործել է հայի հասարակական ասպարէզի վրա, յաճախ գրաւած լինելով նրա ամենախոշոր դիրքերը։

Այն մեծ արթնութիւնը, որ նա ներշնչեց Հայաստանի խորքերում գտնվող ժողովրդին, այն ժողովրդասիրական ոգին, որ նա պատուաստեց թիւրքահայ գործողների ընդարձակ խաւերին, այն մեծ ոգևորութիւնը, որ նա ա-

նեաներ և թէ մահմեդականներ, պատգամաւորութիւն վրաց ընկերութեան։ Անանիա արքեպիսկոպոսը բնորոշեց հայ եկեղեցու հովուապետի փայլուն պատկերը։

Եւ որովհետև հոգեհանգիստը նշանակված ժամից մի փոքր վաղ վերջացաւ, մահմեդական հոգեւորականութիւնը, առաջնորդութեամբ նահանգական ղազիի, ուշացաւ և չը կարողացաւ ներկայ լինել ընդհանուր հոգեհանգստին. այդ պատճառով նրանք ուղղակի գնացին արքեպիսկոպոս Անանիայի մօտ, ուր դէպքին պատշաճ ճառախօսութիւններ եղան։ Ապա նրանք ցանկութիւն յայտնեցին աղօթելու եկեղեցում։ Նրանց տարան այնտեղ։ Ժողովուրդը սկսեց լցվել եկեղեցում։ Ղազին ուրիշ մօլլաների հետ աղօթքներ կարդաց, որից յետոյ ասաց.

«Հայ եղբայրներ։ Դուք չը կարծէք, որ ձեր կորուստը յանձին հայ հոգեւորականութեան պետի, ամենից յարգված հովուապետ Մկրտիչ Ի-ի, միմիայն ձեր կորուստն է։ Մենք եկանք այստեղ վկայելու ձեզ, որ ձեր կորուստը և մեր կորուստն է։ Դուք վշտահար էք եղած, և մենք անկեղծ կերպով ցաւակից ենք ձեզ։ Կրօնը միայն ձևականութիւններով է տարբեր, սակայն նրա էութիւնը և հիմքերը մի են։ Մենք բոլորս ձեզ հետ միասին ցաւում ենք մի այնպիսի հովուապետի մասին, որպիսին հանգուցեալ Մկրտիչ Ի-ն էր։ Մեզ մահմեդականներիս անցեալ տարի վիճակվեց նոյնմանն վիշտ կրել։ Վախճանվեց մեր մուշտէիդը, և բոլոր հայերը վշտակից էին մեզ. այժմ դուք էք վշտահար, և մենք մեր ներկայութեամբ այստեղ ապացուցանում ենք, որ օտար չէ մեզ ձեր վիշտը և մեզ ձեզ հետ միասին մնում է աղօթել Աստուծուն հանգուցեալի հոգեհանգստի մասին և յուսալ, որ նրա յաջորդը արժանաւոր անձն կը լինի և նա նոյնպէս կը սիրէ և հաւատարիմ կը լինի իր ժողովրդին, որպիսին էր հանգուցեալը»։

Բաքւում հիւր եղող Ալէքսանդրօպոլի յաջորդ Մատթէոս վարդապետը շնորհակալութիւն յայտնեց արքեպիսկոպոսի, հոգեւորականութեան և հայ ժողովրդի կողմից մահմեդական հոգեւորականութեանը, որը եկել է ցաւակցութիւն յայտնելու հայ ժողովրդին իր կրած մեծ կորստի առիթով, և ի միջի այլոց ասաց, որ հանգուցեալ կաթողիկոսը իր ամբողջ կեանքի ընթացքում քարոզում էր միութիւն, եղբայրութիւն և հաւասարութիւն ազգերի միջև, որոնք ճակատագրի կամքով վաղուց ի վեր ապրում են կողք կողքի, մի հողի վրա, շնչելով միևնոյն օդը։

Ռուս-Թիւրքական պատերազմից յետոյ սովի ժամանակ Վանի վիլայէթում նա անխիղճ բաժանում էր դրսից ստացվող նըպաստները թէ հայերին և թէ թիւրքերին, քիւրդերին, ասորիներին և այլոց, որի համար ստացաւ «Հայրիկ» անունը։ Վերջին տարիները, երբ կուրացած հարեւանները եղբայրասպան կռիւ էին մղում, նա ամբողջ սրտից վշտանում էր, ողբում էր խղճը մոռացածներին և կոչ էր անում խաղաղ լինել։ Թէ ղազիի և թէ Մատթէոս վարդապետի ճառերը անդադրում ազդուրութիւն թողին։ («Б. Э.»)

—

Հոկտեմբերի 31-ին Բաքուի բոլոր հայ դրասենեակները, խանութները և արհեստանոցները փակված էին։ Չէին բանում և հայերի նաւթանքները և գործարանները, նոյնպէս չէին աշխատում օտարնաւթանքների և գործարանների հայ բանուորները։ Բոլոր դպրոցների հայ սանները արձակված էին, նոյնպէս արձակված էին հայ զինուորները։ Չիաքաշի երթևեկութիւնը երէկ սովորականից մի փոքր ուշ սկսվեց և ապա շարունակվեց մի փոքր դժուարութեամբ, որովհետև բոլոր հայ կօնդուկտորները և ձիավարներն այդ օրը չէին բանում։

—

Նոյեմբերի 1-ի ժամը 5-ին կայացաւ Բաքուի հայ համայնքի ժողովը, ուր վճռվեց պատգամաւորութիւն ուղարկել կաթողիկոսի թաղմանը Բաքուի հայերի կողմից։ Պատգամաւորներ են ընտրված Բ. Դոլուխանովը, Կ. Խատիսեան և Ա. Ղուկասեան։

Հայ դպրոցների կողմից որպէս պատուիրակներ կերթան բժ. Թ. Զաքարեան, իսկ Մարգասիրական ընկերութեան կողմից՝ Եր. Թադեոսեան։ («Бак. Эхо»)

—

«Юж. Телег.» լրագրում կարդում ենք, որ հինգշաբթի, նոյեմբերի 1-ին, Նոր-Նախիջևանի հայոց տաճարում պատարագից յետոյ հանդիսաւոր հոգեհանգիստ կը կատարվի Նոր-Նախիջևանի բոլոր եկեղեցիների հոգեւորականութեան մասնակցութեամբ, կաթողիկոսի ժամվան առիթով։ Այդ օրը Նոր-Նախիջևանի բոլոր աշակերտները ազատ կը լինեն դասերից։

—

Կաթողիկոսի մահվան լուրը հէնց որ ստացվեց, շատ խանութներ փակվեցին Ռոստովում և Նոր-Նախիջևանում։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Էջմիածնից մեզ հեռագրում են նոյեմբերի 2-ի երեկ. 6 ժ. 20 ր.

Էջմիածնի կայարանից շոսսէ ճանապարհը սաստիկ փչացած լինելով, խորհուրդ ենք տալիս Էջմիածին եկողներին գալ Երևանով։

—

Բաթում, 2 նոյեմբերի

Կամաւոր նաւատորմիղը հերթական նաւեր է նշանակել Բաթումից Զէյդա՝ ուխտաւոր մահմեդականներին տեղափոխելու համար։ («Հ. Գ.»)

—

Սալմաստ, 10 հոկտեմբերի

Երկու օր առաջ Թիւրքիայից 40—50 ընտանիքներ եկան Սալմաստ, որոնք դաղթում են Կեավառից։ Սրբանց դրութիւնը արգահատելի է։

—

Կ. Պոլիս, 2 նոյեմբերի

Սալոնիկում նշանակված յատուկ դատարանը պետական դատաճանութեան գործի առիթով, որ կապ ունի յուլիսի 14-ին Թօվշիղի մօտ հրոսակախմբի յարձակման հետ, 6 մեղադրվող յոյներից 5-ին դատապարտեց աքսորի 4—6 տարով։ Դատարանում ապացուցվեց, որ ներկայումս Սերեսի և Սալոնիկի յոյն հիւպատոսարանները անման չեն հրոսակախմբերի ագիտացիայից։ («Բ. Թ.»)

—

Կ. Պոլիս, 2 նոյեմբերի

50 հոգուց բաղկացած բուլգարական հրոսակախումբը Մոնաստիրի վիլայէթում այրել է Ցինգիէլի և Պոլոկ գիւղերը։ Մանրամասնութիւնները առ այժմ յայտնի չեն։ («Բ. Թ.»)

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ ԵՒ ՄԱՀԸ

—

Էջմիածին, 31 հոկտեմբերի

Հայոց կաթողիկոսի մահը անսպասելի չէր։

Ինչպէս արդէն լրագիրներում հաղորդված էր, նա վաղուց տկար էր, բայց տկարութիւնը հոգեկան տառապանքների և սովորական զառամեալ տարիքի արդիւնք էր։ Այդպիսով կեանքի վերջին օրերում կաթողիկոսը եղել է նորմալ դրութեան մէջ, այսինքն սովորական թուլութիւն է ունեցել, այնպէս որ վերջին 2—3 օրը նոյնիսկ չէը ընդհատել ընդունելութիւնը իր մօտ։

Սակայն այդ դրութիւնը հոկտեմբերի 28-ի ցերեկվայ ժամը 3-ից սկսել է վատթարանալ։ Սրտի անկանոնութեան պատճառով, վանքի բժիշկ Տէր-Խաչատրեանի խորհրդով, Երևանից հրաւիրում են բժ. Տէր-Աւետիքեանին։ Երկու բժիշկները կօնսիլիում կազմելով և ի նկատի առնելով, որ հիւանդի արիւնը հետզհետէ իջնում է ժամանի ներքևի մասերը, որից և սկսում են ոտները ուռչել, գալիս են այն եզրակացութեան, որ մահը անխուսափելի է։ Չը նայելով դրան, այնուամենայնիւ որոշում են կանչել Երևանից, մինչև իսկ եթէ հարկ լինի և Թիֆլիսից, ուրիշ բժիշկներ ևս կօնսիլիում կազմելու համար։

28-ի ամբողջ գիշերը բժիշկ Տէր-Խաչատրեանը մնում է կաթողիկոսի մօտ, որովհետև երեկոյեան ժամը 6-ից սկսած հիւանդի շնչառութիւնը գնալով ծանրանում է, հևոցը սաստկանում։

Յաջորդ օրը՝ հոկտեմբերի 29-ին, առաւօտեան ժամը 9 ½-ին, բժիշկը, նկատելով մօտալուտ վախճանը, խնդրեց հրաւիրում է սինօդականներին վեհարան, բայց նրանք գալիս են և տեսնում հայրապետին արդէն վախճանված, որի մասին և կազմվում է արձանագրութիւն։ Մահվան մասին արձանագրութիւն են կազմում նոյնպէս և դաւառապետն ու գաւառական բժիշկը։

Սինօդականները անմիջապէս ժողով գումարելով որոշում են պաշտօնապէս յայտարարել ինչպէս ռուսահայ, նոյնպէս և արտասահմանեան հոգեւոր պետերին։

Ի միջի այլոց հաղորդված է ներքին գործերի մինիստրին և Կովկասի Փոխարքային։

Հեռագիրները ուղարկվել են հէնց մահվան օրը, ժամը 11-ին։ Հեռագրված է միաժամանակ և Թիֆլիսի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսին հայրապետի անունը վայել դպաղ ուղարկելու։

Սինօդը արտաքոյ կարգի ժողովում որոշել է ամփոփել հայրապետին մայր տաճարի զանգակատան հարաւային կողմում՝ Մաքար կաթողիկոսի շիրմի մօտ։

Ներկայումս կաթողիկոսի մարմինը դրված է վեհարանի դրսի դահլիճում, ուր ամենայն օր, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, սուգի զանգ է տրվում, և հոգեւորականութիւնը բոլորը միասին գնում են ամբիծք կատարում։ Լողացման կարգը կը կատարվի շաբաթ օրը և նոյն օրն էլ կէսօրից յետոյ, ժամը 2 ½-ից, մարմինը տաճար կը տարվի և կը մնայ մինչև թաղման օրը։ Թաղումը տեղի կունենայ նոյեմբերի 6-ին, երեքշաբթի օր, իսկ թաղման կարգը կը կատարի կաթողիկոսին օծող Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանցը։

Վեհարանը, կաթողիկոսի մահից անմիջապէս յետոյ, սինօդի կարգադրութեամբ կնքվում է, իսկ տեղական գաւառապետի հրամանով 3 զինուոր պահապաններ են նշանակվում։ Վերջիններս հոկտեմբերի 31-ից այլ ևս չէին եկել։

Կովկասի Փոխարքայի ներկայացուցիչ Լազարեվի համար բնակարան է յատկացված ճեմարանի շինութեան մէջ։

Ներկայումս տեղակալութեան պաշտօնը վարում է սինօդի ներկայ աւագ անդամ Սուրէնեան արքեպիսկոպոսը։ Բայց սրանից մի 15 օր առաջ սինօդի անդամութեան համար առաջարկված է Ներսէս արքեպ. Խուդաւերդեանցը։ Եթէ վերջինս հաստատվելու լինի, այն ժամանակ տեղապահը կը լինի նա, որովհետև պօլօժենիայի հիման վրա սինօդականների աւագագոյնը համարվում է տեղապահ կաթողիկոսի մահից յետոյ, և ի հարկէ Ներսէս արքեպ. աւագագոյնն է ամենքից։ Ներկայումս սինօդի անդամների կազմը հետևեալն է. Դէորգ, Արիստակէս և Շիրակունի արքեպիսկոպոսները և Յուսիկ ու Բարգէն վարդապետները։

Կաթողիկոսի մահով փակվում է հայրապետական դիւանատունը և վերանում է դիւանապետի պաշտօնը։

—

1 նոյեմբերի

Կաթողիկոսի մահվան ժամանակ իր ազգականներից ներկայ է եղել միայն Վահան Խրիմեանը, իսկ Խորէնը տկարութեան պատճառով գտնվում էր Թիֆլիսում։ Վերջինս իր ընտանիքով Էջմիածին է վերադարձել հոկտեմբերի 31-ին։

Վեհափառի մահը տեղի է ունեցել չափազանց հանդիստ ու նորմալ դրութեան մէջ, հաւարեա աննկատելի կերպով։ Այս բոպէին մարմինը հանգչում է փայտէ մահճակալի վրա, սպիտակ սաւանով ծածկված. գլխին հագցրած է իր սովորական սև, թաւշեայ գլխոց։ Զառամեալ դէմքը պահպանել է աչքի գրաւող իր գծերը. խոշոր արծուէ քիթը դարձեալ հոյակապ կերպով գերիշխում է կմախք դարձած երեսի վրա, միայն գրաւիչ աչքերը փակված են յաւիտենական քնով, միայն յաղթանգամ ժարմինն է կորցրել իր վեհ վիթխարութիւնը, չափազանց նիհարել ու փոքրացել։

Այսօր առաւօտեան, ժամը 10-ին, Ղևոնդ եպիսկոպոսը կատարեց հայրապետի գերեզմանը փորելու կարգը։ Իսկ սրանից մի ժամ առաջ Միւնխէնի գեղարուեստական ճեմարանը աւարտած արձանագործ ալէքսանդրօպոլցի Սերգէյ Մերկուրովը եկաւ հայրապետի բիւստը պատրաստելու սեփական նախաձեռնութեամբ. պ. Մերկուրովը հոկտեմբերի 31-ին եկաւ Թիֆլիսից, ուր պատրաստում է Փիթօյէվի արձանը Արտիստական ընկերութեան յանձնարարութեամբ։

Տեղակալ Գէորգ արքեպիսկոպոսը ցաւակցական հեռագիր է ստացել Փոխարքայից, որը յայտնում է, որ փոխարքայութեան կողմից ներկայացուցիչ լինելու է Լազարեվը։

Ցաւակցական հեռագիր է ստացվել նաև Քիշինեվի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսից, որը իր կողմից ներկայացուցիչ է նշանակում Կարապետ վարդապետին։

Ցաւակցական հեռագիրներ ստացվել են Ռուսաստանի թեմական բոլոր հայ առաջնորդներից, պատրիարք Օրմանեանից, Կալկաթայի և Թաւրիզի առաջնորդներից, Երևանի պրոգիմնազիայի աշակերտուհիներից, Ալէքսանդրօպոլի օրիորդաց գիմնազիայից, Լազարեան ճեմարանի վարչութիւնից, որը և յայտնում է, որ հոգեհանգիստ է կատարել։

Երևանի նահանգապետ Տիղենհաուզէնը ուղարկել էր իր մօտ գտնվող առանձին յանձնարարութիւնների ատենադպիր Թադէոս Քալանթարեանին՝ վեհի մահվան առիթով ցաւակցութիւն արտայայտելու և յայտնելու, որ ինքը անձամբ ներկայ կը լինի թաղմանը։

Լ. Դանիէլեանց

Ց. Գ.—Հէնց այս բոպէիս սինօդի անդամ Բարգէն վարդապետը վանական կառավարութեան քարտուղար Լ. Ասլանեանի հետ միասին գնացին Հռիփսիմէի վանքը ցուցակագրելու հայրապետական իրերը։

Լ. Դ.

—

Կաթողիկոսի հիւանդութեան մասին կազմվել են հետեւեալ արձանագրութիւնները։

1) Արձանագրութիւն

28 հոկտ. 1907 թ., ժամը 6-ին երեկ.

Ներկայ էին գերապատիւ Մուքիսա, Գէորգ, Արիստակէս, Յովհաննէս արքեպիսկոպոսները, Ղևոնդ եպիսկոպոսը, Կարապետ և Յուսիկ վարդապետները, ճեմարանի տեսուչ պ. Մինաս Բերբերեանը, բժիշկներ՝ պ.պ. Աբամ Տէր-Աւետիքեան—Երևանից և Կարապետ Տէր-Խաչատրեան—Մայր Աթոռի բժիշկը։

Սրանք բոլորը հրաւիրվել էին դիւանատուն լսելու պ.պ. բժիշկների կարծիքը նորին սրբութեան Վեհափառ Հայրապետի հիւանդութեան մասին։ Պ. պ. բժիշկները, վեհի առողջութիւնը քննելուց յետոյ, յայտնեցին, որ նորին սրբութեան հիւանդութիւնը շատ լուրջ է, սիրտը չափազանց անկանոն է գործում, որ հետևանք է ծերութեան, և այդ իսկ պատճառով առաջացած է ոտքերի ուռուցք մինչև ծնկները (արիւնը չճնցած է)։ Իւրաքանչիւր վայրկեան կարելի է սպասել, որ սիրտը բոլորովին կանգ կառնէ, բայց և կարող է պատահել, որ դրութիւնը կրկին դէպի լաւը փոխվի։ Իսկ գիտակցութիւնը յամենայն դէպս բոլորովին տեղն է։

Ժողովական սրբազանների առաջարկութեամբ որոշվեցաւ վաղը՝ հոկտ. 29-ին բժշկական խորհուրդ կազմել Էջմիածնում։ Խնդրվեցաւ պ. բժ. Տէր-Աւետիքեանին, որ նա վաղը իրան հետ բերի Երևանից պ. պ. բժ. Պարչինսկուն և Ց. Յովհաննիսեանին, և Մայր Աթոռի պ. բժշկի մասնակցութեամբ բժշկական խորհուրդ կազմել չորս հոգով։

Բժ. Ա. Տէր-Աւետիքեանց, Բժ. Տէր-Խաչատրեանց, Տեսուչ ճեմ. Բերբերեանց, Սուքիաս. արքեպ. Պարզեանց, Դէորգ արքեպիսկոպոս, Արիստակէս արքեպիսկոպոս, Յովհաննէս արքեպիսկոպոս, Ղևոնդ եպիսկոպոս, Կարապետ ծայր. վարդապետ, Յուսիկ վարդապետ։

2) Արձանագրութիւն

Մենք, ի ներքոյ սորին ստորագրողս, հրաւիրեալք այսօր, յեօթներորդում ժամու առաւօտեան, ի վեհարան ի պատճառս ժամերգ հիւանդութեան վեհափառ կաթողիկոսի ամենայն հայոց Մկրտչի Ա., այսու վկայեմք, զի Նորին Սրբութիւնն ի ներկայութեամբ մերում խաղաղ հանգեաւ ի Տէր յինն ժամու առաւօտեան։ Բժիշկ Մ. Աթոռոյ Տէր-Խաչատրեանցն ներկայ գտեալ է առ Նորին Սրբութիւնն յութերորդ ժամէ երեկոյեան աւուր անցելոյ մինչ ցմահն։ Ի 29 հոկտեմբերի 1907 ամի, ի ս. Էջմիածին։

Գէորգ արքեպիսկոպոս, Արիստակէս արքեպիսկ., Յովհաննէս արքեպիսկ., Յուսիկ վարդապետ, բժ. Կ. Տէր-Խաչատրեանց։

Ներկայ էր պրոկուրօրի պաշտօնակատար Յ. Յովհաննիսեանց։

—

Սինօդի անունով ստացված հեռագիրները

1) Դարաբիլիսա, 31 հոկտեմբերի

Ղարաքիլիսայի հասարակութիւնը հոգեւորականութեան հետ միասին այսօր կատարելով հոգեհանգիստ հանգուցեալ կաթողիկոսի համար, յայտնում է իր խորին ցաւակցութիւնը ազգի մեծ կորստի առիթով, և վճռեց պատուել այդ օրը սգով՝ փակելով բոլոր վաճառատները. ընտրեց իր ներկայացուցիչ տէր-Խորէնին և Նալբանդեանին ներկայ գտնվելու նորին սրբութեան թաղմանը։

Հասարակութեան անունից՝

Բուստամեանց

2) Բագու, 31 հոկտեմբերի

«Թիֆլիսի ընկերութեան» ծառայողները ցաւում են հանգուցեալ մարդասէր, պաշտպան և ազատութեան համար մարտնչող նորին սուրբ օծութեան ամենայն հայոց կաթողիկոսի մահվան համար։

3) Ասխաբադ, 31 հոկտեմբերի

Ողբում ենք ծանր կորուստը, յանձին սիրեցեալ Հայրիկի, որը կրեց հայ ազգը։ Մեր կողմից ներկայացուցիչ է ընտրված Թաղման հանդիսին ներկայ գտնվելու Խուրշիդ Մնացականեանը։

Ասխաբադի հայ հասարակութիւն

4) Պետերբուրգ, 30 հոկտեմբերի

Նորին ցաւակցութեամբ լսեցի յարգելի ծերունու՝ կաթողիկոսի մահը։

Ինժինէր Դաստամով

5) Պարիզ, 12 նոյեմբերի (ն. տ.)

Սրտագին ցաւակցութիւնս. սուրբ հարցդ մաղթենք երկար կեանք։

Հոգեւոր հովիւ և հոգաբարձուք հայոց Պարիզի

6) Վիեննա, 12 նոյեմբերի (ն. տ.)

Ցաւօք կարդացինք վեհափառի մահը. տէրը հոգին լուսաւորէ. մեծ կորուստ ենք հայոց ազգին։ Վիէննայի հայերս սուգ ենք ձեզ հետ։

Բիւրքչեանց

7) Ղզլար, 31 հոկտեմբերի

Հայ ազգաբնակութեան անունից ուղարկում են անկեղծ ցաւակցութիւնս ծանր կորուստի պատճառով։ Տեղիս հայերը լալագին աղօթում են ի Տէր հանգուցեալ անմոռանալի Հայրիկի հոգու համար։

Ղզլարի քաղաքագլ.՝ Կօրսիսիձէ

8) Ասխաբադ, 31 հոկտեմբերի

Յանձին Հայրիկի ողբում ենք հայոց մեծ կորստեան։

Հոգաբարձ. և ուսուցչ. կազմ

9) Խարկով, 31 հոկտեմբերի

Տեղիս հայ ուսանող-ուսանողուհիներս յայտնում ենք խորին ցաւակցութիւններս անպաշտպան հայ ժողովրդի պաշտպան Հայրիկի մահվան առթիւ։

10) Ասխաբադ, 30 հոկտեմբերի

Ասխաբադի կանանց բարեգործական ընկերութիւնը և դպրոցը իրանց խորին ցաւակցութիւնն են յայտնում հանգուցեալ անմոռանալի պատրիարք Մեծ Հայրիկի, իր ժողովրդի իսկական հօր, ընկերութեան վարչութեան անփոխարինելի խնամակալի մահվան առթիւ։

Մամիկոնեան, Տէր-Յովսէփեան, Էլչիբէկեան, Աղբալեան, Սաքիսբէկեան, Գայիանեան, Արամեան, Յովսէփեան։ Վարժուհիներ՝ Մամիկոնեան, Սաքարեան, Եարամիշեան, Բաղդասարեան, Գայիանեան, Կրօնուսոյց՝ Աղբալեան։

—

Ց. Գ.—Ժողովուրդը այսօր առաւօտանից մինչև էկսօր խռնված է Էջմիածնի վանքի բակում և չէ ուզում թոյլ տալ որ գերեզմանը փորեն Մակարի կողքին. պահանջում են թաղել տաճարի կողքին՝ իր շինել տուած մատուռներից մէկի մօտ։ Կը գրեմ մանրամասնութիւնը։

Լևոն Դ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 նոյեմբերի։ Ցերեկվայ ժամը 12-ի մօտերը միտրոպոլիտ Անտոնիյը, Պետական Դումայի անդամներ՝ Եւլոգի և Միտրոֆան եպիսկոպոսների հետ, սկսեց հանդիսաւոր մաղթանքի արարողութիւնը։ Կուլուարի ահագին դահլիճը լցվեց Դումայի աղօթող անդամներով, նրան մերձ ընկած սրահները անքում էին հոծ բազմութեան և մամուլի ներկայացուցիչների ոտքերի տակ։ Ապա, միտրոպոլիտ Անտոնիյը դիմեց Դումայի անդամներին հետևեալ ճառով։

«Երրորդ անգամ մենք այստեղ կատարում ենք մեր աղօթքը, բայց սրտի վշտով ստիպված ենք ասել, որ աղօթող Դուման, նրա անդամների սակաւ բացառութեամբ, մենք չը տեսանք. այդ պատճառով նրա աշխատանքները մինչև օրս խաղաղ, արդիւնաւէտ և ստեղծագործիչ չէին։ Առանց Աստուծոյ բոլորն էլ անզօր և ոչնչութիւն են։

Այդպէս, ժողովրդի նոր ընտրեալներ, սրտագին աղօթեցէք Աստուծուն, թող Նա՝ Ամենաբարին աջողութեամբ պսակէ ձեր նախնական բարի աշխատանքները՝ ի փառս և ի բարեկեցութիւն մեր թանկագին հայրենիքի։ Ցանջվել, շատ է տանջվել նա զանազան դժբաղդութիւններից, անկարգութիւններից և երկպառակութիւններից։ Զար մարդիկ ոտնահարեցին նրան, ստեղծելով աւազակութիւններ, կողոպտումներ և սպանութիւններ։ Թող Աստուած իր արդար դատաստանով դատէ նրանց։ Իսկ ձեզ, եղբայրներ, ինչպէս և նախկին Դումաների ներկայացուցիչներիդ եմ դիմում իմ անվերջ աղաչանքով. մտածեցէք ոչ թէ կուսակցական շահեր, այլ Ռուսաստանի բարօրութիւնը և երջանկութիւնը. նրա խաղաղութիւնը, հզօրութիւնը և փառքը, խուսափեցէք անմպատակ վէճից և բանակռիւներից. խորաթափանց աշխատեցէք անդաւաճան միութեամբ մեր մեծ Կայսրի և Նրա դրած կառավարութեան հետ միասին. աշխատեցէք խաղաղ, հնարամուտ լինելով միշտ արդարութեան, այլ ոչ էգոիստական շահերի։ Այդօրինակ աշխատանքի եմ կոչում ես ձեզ և օրհնում եմ ձեզ բոլորիդ։ Իսկ երկպառակիչների դատաստանը թող ինքը Տէրը կտրէ»։

Մաղթանքից յետոյ երգեցիկ խումբը, պատգամաւորների ցանկութեամբ, երգեց ազգային օրհներգը, որ ընդունվեց բարձրաձայն «ուրա»-ներով և միաձայն պահանջի համաձայն երեք անգամ կրկնվեց։ Ապա, իւրաքանչիւր անդամին անլսելի «ուրա»-ների տարափի տակ, պատգամաւորները և հատուկ ութիւնը ուղղվեցին գրաւելու իրանց տեղերը նիստի դահլիճում։

Ուղիղ ժամը 12-ին նիստի դահլիճը լցվում է լցվել պատգամաւորներով։ Հասարակութեանը յատկացված վերնասրահներում գրաւված են ոչ միայն բոլոր տեղերը և օթեակները, այլ և նրանց մօտի հրապարակները։ Ժամը 12 և 6 րոպէին մինիստրների օթեակում երևում են ֆինանսների, ծովային, գիւղատնտեսական, արդարադատութեան, առևտրի և արդիւնաբերութեան մինիստրները, երկրորդ օթեակում՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստրը, հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարիչը, մինիստրների օգնականներից մի քանիսը։ Մինիստրների խորհրդի նախագահը, ֆինանսների մինիստրը և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարիչը իջնում են դահլիճ, բարևում և զրուցում են մի քանի պատգամաւորների հետ։ Ժամը 12 և 11 րոպէին նախագահութեան տեղն է բարձրանում սենատոր Գրաբարէվը պետական քարտուղարի, պետական գիտնական ատենադիրների և սրանց օգնականների ուղեկցութեամբ։ Աջակողմեանների և կենտրոնի աթոռները այդ ժամանակ բառացի կերպով լի են պատգամաւորներով. միայն ծայրագոյն ձախակողմեանների ատեանները մնում են երևում 30 ազատ տեղեր։ Գրաւելով նախագահական ամբիոնը, խսկական գաղտնի խորհրդական Գրաբարէվ գլուխ է տալիս կենտրոնին, աջակողմին և ձախակողմին և ասում է. «Պետական Դումայի պարոն անդամները ժողովվել են օրինական թեով, նիստը սկսելու համար»։ Պետական քարտուղարը կարդում է Դումայի բացման մասին կառավարիչ սենատի անունով տրված Բարձրագոյն անուանական դեկրետ։ Սենատոր Գրաբարէվը ասում է. «Թագաւոր Կայսրը...»։ (Դումայի բոլոր անդամները ինչպէս մի մարդ ոտքի են կանգնում)։

Կրուլէնսկի.—«Կեցցէ Թագաւոր Կայսրը»։

Միաձայն որոտընդոստ «ուրա»-ները զբաղեցնում են Սպիտակ դահլիճի կամարները և գնում-կորչում են Տաւրիկեան պալատ ելսորքերում...

Սենատոր Գրաբարէվը շարունակում է. «Թագաւոր Կայսրը, աթոռանացնելով ինձ իր մեծ յանձնարարութեան, հրամայեց ինձ Պետական Դումայի նիստը բանալու ժամանակ Միապետի անունից յայտնել հետևեալը. Նորին Կայսերական Մեծութիւնը ամենաողորմածաբար ողջունում է Պետական Դումայի այժմեան ընտրեալ անդամները, Ամենակարողի օրհնութիւնն է խնդրում Պետական Դումայի առաջիկայ աշխատանքներին, թանկագին հայրենիքում կարգ ու կանոն և հանգստութիւն հաստատելու, ազգաբնակութեան բարեկեցութիւնը և լուսաւորութիւնը զարգացնելու, վերածնված պետական կաղմ հաստատելու, անբաժանելի Ռուսական Պետութեան հզօրութիւնն ու փառքը ամրապնդելու համար»։

Կենտրոնից կրկին առողջութիւն է մաղթվում Թագաւոր Կայսրին։ Խլացուցիչ «ուրա»-ները երկար, շատ երկար կլանում են դահլիճը։ Եթէ վերջինս հաստատվելու լինի, այն ժամանակ տեղապահը կը լինի նա, որովհետև պօլօժենիայի հիման վրա սինօդականների աւագագոյնը համարվում է տեղապահ կաթողիկոսի մահից յետոյ, և ի հարկէ Ներսէս արքեպ. աւագագոյնն է ամենքից։ Ներկայումս սինօդի անդամների կազմը հետևեալն է. Դէորգ, Արիստակէս և Շիրակունի արքեպիսկոպոսները և Յուսիկ ու Բարգէն վարդապետները։

Կաթողիկոսի մահով փակվում է հայրապետական դիւանատունը և վերանում է դիւանապետի պաշտօնը։

—

1 նոյեմբերի

Կաթողիկոսի մահվան ժամանակ իր ազգականներից ներկայ է եղել միայն Վահան Խրիմեանը, իսկ Խորէնը տկարութեան պատճառով գտնվում էր Թիֆլիսում։ Վերջինս իր ընտանիքով Էջմիածին է վերադարձել հոկտեմբերի 31-ին։

Վեհափառի մահը տեղի է ունեցել չափազանց հանդիստ ու նորմալ դրութեան մէջ, հաւարեա աննկատելի կերպով։ Այս բոպէիս մարմինը հանգչում է փայտէ մահճակալի վրա, սպիտակ սաւանով ծածկված. գլխին հագցրած է իր սովորական սև, թաւշեայ գլխոց։ Զառամեալ դէմքը պահպանել է աչքի գրաւող իր գծերը. խոշոր արծուէ քիթը դարձեալ հոյակապ կերպով գերիշխում է կմախք դարձած երեսի վրա, միայն գրաւիչ աչքերը փակված են յաւիտենական քնով, միայն յաղթանգամ ժարմինն է կորցրել իր վեհ վիթխարութիւնը, չափազանց նիհարել ու փոքրացել։

Այսօր առաւօտեան, ժամը 10-ին, Ղևոնդ եպիսկոպոսը կատարեց հայրապետի գերեզմանը փորելու կարգը։ Իսկ սրանից մի ժամ առաջ Միւնխէնի գեղարուեստական ճեմարանը աւարտած արձանագործ ալէքսանդրօպոլցի Սերգէյ Մերկուրովը եկաւ հայրապետի բիւստը պատրաստելու սեփական նախաձեռնութեամբ. պ. Մերկուրովը հոկտեմբերի 31-ին եկաւ Թիֆլիսից, ուր պատրաստում է Փիթօյէվի արձանը Արտիստական ընկերութեան յանձնարարութեամբ։

Տեղակալ Գէորգ արքեպիսկոպոսը ցաւակցական հեռագիր է ստացել Փոխարքայից, որը յայտնում է, որ փոխարքայութեան կողմից ներկայացուցիչ լինելու է Լազարեվը։

Ցաւակցական հեռագիր է ստացվել նաև Քիշինեվի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսից, որը իր կողմից ներկայացուցիչ է նշանակում Կարապետ վարդապետին։

Ցաւակցական հեռագիրներ ստացվել են Ռուսաստանի թեմական բոլոր հայ առաջնորդներից, պատրիարք Օրմանեանից, Կալկաթայի և Թաւրիզի առաջնորդներից, Երևանի պրոգիմնազիայի աշակերտուհիներից, Ալէքսանդրօպոլի օրիորդաց գիմնազիայից, Լազարեան ճեմարանի վարչութիւնից, որը և յայտնում է, որ հոգեհանգիստ է կատարել։

Երևանի նահանգապետ Տիղենհաուզէնը ուղարկել էր իր մօտ գտնվող առանձին յանձնարարութիւնների ատենադիր Թադէոս Քալանթարեանին՝ վեհի մահվան առիթով ցաւակցութիւն արտայայտելու և յայտնելու, որ ինքը անձամբ ներկայ կը լինի թաղմանը։

Լ. Դանիէլեանց

Ց. Գ.—Հէնց այս բոպէիս սինօդի անդամ Բարգէն վարդապետը վանական կառավարութեան քարտուղար Լ. Ասլանեանի հետ միասին գնացին Հռիփսիմէի վանքը ցուցակագրելու հայրապետական իրերը։

Լ. Դ.

—

Կաթողիկոսի հիւանդութեան մասին կազմվել են հետեւեալ արձանագրութիւններ։

1) Արձանագրութիւն

28 հոկտ. 1907 թ., ժամը 6-ին երեկ.

Ներկայ էին գերապատիւ Մուքիսա, Գէորգ, Արիստակէս, Յովհաննէս արքեպիսկոպոսները, Ղևոնդ եպիսկոպոսը, Կարապետ և Յուսիկ վարդապետները, ճեմարանի տեսուչ պ. Մինաս Բերբերեանը, բժիշկներ՝ պ.պ. Աբամ Տէր-Աւետիքեան—Երևանից և Կարապետ Տէր-Խաչատրեան—Մայր Աթոռի բժիշկը։

Սրանք բոլորը հրաւիրվել էին դիւանատուն լսելու պ.պ. բժիշկների կարծիքը նորին սրբութեան Վեհափառ Հայրապետի հիւանդութեան մասին։ Պ. պ. բժիշկները, վեհի առողջութիւնը քննելուց յետոյ, յայտնեցին, որ նորին սրբութեան հիւանդութիւնը շատ լուրջ է, սիրտը չափազանց անկանոն է գործում, որ հետևանք է ծերութեան, և այդ իսկ պատճառով առաջացած է ոտքերի ուռուցք մինչև ծնկները (արիւնը չճնցած է)։ Իւրաքանչիւր վայրկեան կարելի է սպասել, որ սիրտը բոլորովին կանգ կառնէ, բայց և կարող է պատահել, որ դրութիւնը կրկին դէպի լաւը փոխվի։ Իսկ գիտակցութիւնը յամենայն դէպս բոլորովին տեղն է։

Ժողովական սրբազանների առաջարկութեամբ որոշվեցաւ վաղը՝ հոկտ. 29-ին բժշկական խորհուրդ կազմել Էջմիածնում։ Խնդրվեցաւ պ. բժ. Տէր-Աւետիքեանին, որ նա վաղը իրան հետ բերի Երևանից պ. պ. բժ. Պարչինսկուն և Ց. Յովհաննիսեանին, և Մայր Աթոռի պ. բժշկի մասնակցութեամբ բժշկական խորհուրդ կազմել չորս հոգով։

Բժ. Ա. Տէր-Աւետիքեանց, Բժ. Տէր-Խաչատրեանց, Տեսուչ ճեմ. Բերբերեանց, Սուքիաս. արքեպ. Պարզեանց,

են Տաւրիկեան պալատի ամբողջ դահլիճը...

Ժամը 12 և 14 րոպէին, երբ պատգամաւորները կրկին գրաւեցին իրանց տեղերը, սենատոր Գօլուբէվը Պետական Դումայի առաջին նիստը յայտարարում է բացված։ Դումայի անդամները, յոտնկայս, լսում են հանդիսաւոր խոստման ընթերցը։ Սենատոր Գօլուբէվը հրաւիրում է Դումայի անդամներին ստորագրել հանդիսաւոր խոստման ընթերցը, յարակցելով որ Պետական Դումայի յետագայ օրէնսական գործողութիւններին, որոնցից առաջինը հանդիսանում է Դումայի նախագահի ընտրութիւնը, կարող են մասնակցել Դումայի միայն այն անդամները, որոնք այժմ ստորագրում են հանդիսաւոր խոստման ընթերցը։ Պետական Դումայի պրիտաւը սկսում է կարդալ պատգամաւորների ազգանունները պաշտօնական ցուցակի համաձայն։ Դումայի անդամները սկսում են ստորագրել հանդիսաւոր խոստումը։ Այդ ժամանակամիջոցում ծայրայեղ ձախակողմեանների աթոռները լցվում են։

Ժամը 1 և 40 րոպէին վերջանում են հանդիսաւոր խոստման ստորագրութիւնները։ Իսկական գաղտնի-խորհրդական Գօլուբէվը առաջարկում է ձեռնարկել նախագահի ընտրութեան։ Պետական քարտուղարը կարդում է օրէնքի համապատասխան յօդուածը։ Ժամը 1 և 45 րոպէին սկսվում է թերթիկների յանձնելը, որը վերջանում է երեք րոպէից յետոյ։ Թերթիկները կարդալու համար լիազօրվում են Կոմս Վ. Բօբրինսկին, Գուչկովը, Բօգդանովն, կոմս Թօրբերան։ Գուչկովը, Բօգդանովն, կոմս Թօրբերան։ Գուչկովը ձայն են տուել 371 հոգի, Խոմեակովին ձայն են տուել 371 հոգի, Բօբրինսկուն՝ 2, Գօլովինին՝ 1 հոգի։ Դարձեալ և անպէտք թերթիկներ կան հինգ հատ։ Ժամը 1 և 50 րոպէին սկսում են գնդակներով քուէարկել մեկ թեկնածու Խոմեակովին։ Քուէարկութիւնից յետոյ Պետական քարտուղարը կարդում է, որ 371 ընտրողական ձայնով ընդդէմ 9-ի Պետական Դումայի նախագահ ընտրվել է Նիկոլայ Ալեքսէյեվիչ Խոմեակովը։ Ծափահարութիւնների պայթում։ Խոմեակովը վեր է կենում իր տեղից և անմիջապէս դիմում է դէպի նախագահական ամբիոնը։ Անսելի ծափահարութիւնները աւելի և աւելի թընդացնում են դահլիճը։ Ծափահարութիւնների հետ լսվում են ուժեղ «բրաւօ, բրաւօ»։ Շատերը կանգնում են իրանց տեղերից և ծափահարում են ոտքի վրա։ Խոմեակովը կանգնում է նախագահական ամբիոնում։ Նրան այդտեղ սպասում են Գօլուբէվը և պետական քարտուղարը, որոնք շնորհաւորում են նրան և հեռանում են ամբիոնից։ Խոմեակովը ասում է. «Ողջոյն Պետական Դումային։ Դուք հաճեցիք ինձ վրա դնել Պետական Դումայի նախագահի պաշտօնը։ Ես չը պէտք է հրաժարվեմ այդ մեծ պատուից, չը նայած նրան, որ զգում եմ իմ անկարողութիւնը և պակասաւոր իմացականութիւնը, անփորձութիւնը։ Մտնում եմ այստեղ անվստահ դէպի ինձ, բայց ես ընդունեցի ձեր դատավճիռը, որովհետև մտայ այստեղ, այս ամբիոնը ուրիշ հաւատով—հաւատ առ մեծ, եռակի, անբաժանելի Ռուսաստանի փայլուն ապագան»։ (Խլացուցիչ ծափահարութիւնները ընդհատում են Դումայի նախագահի խօսքերը)։ Խոմեակովը շարունակում է. «Եւ այստեղ եկայ հաւատալով, անյողդողդ հաւատով դէպի Դուման, ձեզ հաւատալով, պարոններ։ Հաւատում եմ և քաջ գիտեմ, որ դուք բոլորդ եկել էք այստեղ պետութեան առաջ ձեր պարտականութիւնը կատարելու՝ Ռուսաստանը խաղաղեցնելու համար, ոլորտների վերջ տաք թշնամութեան և կուսակցական չարիքին։ Դուք եկել էք այստեղ բուժելու տանջված հայրենիքի վերքերը, գործքով իրականացնելու կայսրի ինքնակալ կամքը, իրականացնելու պետական պատասխանատու աշխատանքը՝ պետական օրէնսդիր շէնքի հողի վրա։ (Անդրադարձ ծափահարութիւնների նոր պայթում)։ Խոմեակովը շնորհակալութիւն է յայտնում Դումային գլուխ տալով և ազդարարում է, որ Պետական Դումայի հետևեալ նիստը կը նշանակվի սովորական կարգով, երբ Թագաւոր Կայսրին ինքը կը ներկայանայ, և նիստը յայտարարում է փակված։

Նիստը փակվեց 3 ժամին 10 րոպէին։

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 Նոյեմբերի։ Նախ միտրոպոլիտ Անտոնիյ կատարեց հանդիսաւոր մաղթանք։ Ապա նա դիմեց անդամներին մի ճառով, որով մատնանշեց, որ պետական բարձրաստիճան անձերից աւելի է խելացիութիւն պահանջվում։

Այնուհետև նախագահը յայտարարում է Պետական Խորհրդի նիստը բացված։ Նախագահի խօսքերի համաձայն՝ բոլոր անդամները, Թագաւոր Կայսրին իրանց ամենահպատակ զգացմունքները արտայայտելու իրրև նշան, կանգնում են տեղերից և ղրկեցնում են դահլիճը անվերջ «ուրա»-ներով։

Ապա նախագահը կարդաց խորհրդի պատուաւոր նախագահ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի հեռագիրը՝ ի պատասխան նրա ուղարկած հեռագրի։ Խորհուրդը հանդուցեալ Ճավճավաձէի, Գուդեմ-Լէվկովիչի և Բօմէրի յիշատակը յարգում է յոտնկայս։ Նախագահը ողջունում է նորընտիր անդամներին և նիստը յայտարարում է փակված։

Հետևեալ նիստը կը կայանայ նոյեմբերի 3-ին, ցերեկվայ ժամը 2-ին։

ԵՐՐՈՐԴ ԴՈՒՄԱՅԻ ԿԱԶՄԸ

—

Какая, смѣсь племенъ, нарѣчій состояній!...

А. С. Пушкинъ

Ներկայ Պետական Դումայում գոյութիւն կոնենան—մի կողմ թողնելով մանրամասնութիւնները,—հինգ խոշոր զրուպպաներ. 1) pur sand ձախակողմեաններ՝ մօտ 32 հոգի, 2) բացարձակ ընդդիմադիր-սահմանադրականներ՝ կադետներ և նրանց յարողներ—մօտ 103 հոգի, 3) յարմարվող, եւերուն և սակայն իրանց «սահմանադրական» անուանողներ—հոկտեմբերականներ և նրանց թեքվողներ—մօտ 113 հոգի, 4) աջակողմեաններ—մօնարխիստներ—մօտ 171 հոգի և 5) «անկուսակցականներ»—մօտ 18 հոգի։ Վերջիններս այդպէս են կոչվում կամ իրօք այդպիսիներ լինելու պատճառով, կամ մինչև այժմս անյայտ է նրանց որ կուսակցութեան պատկանելը։ Չորրորդ խումբը իրան հոչակելով մօնարխիստ-թագաւորական tout court, պարզ ուզում է հասկացրած լինել, որ նա թեքել չէ էլ ուզում «սահմանադրական» սկզբունքի վրա. չէ՞ որ երկրորդ և երրորդ խմբերը նոյնպէս—գուցէ և առաջինից մի քանի անհատներ—մօնարխիստներ են, չեն ժխտում Թագաւոր-Կայսրի իրաւունքները, ինչպէս գեղեցիկ և բոլորովին գիտնականօրէն ձևակերպեց առաջին Դումայի նախագահը՝ իր անդրանիկ ճառում, ընդգծելով և սահմանադրական սկզբունքը...

Առ այժմս որոշված կարելի է համարել այս հինգ խմբակցութիւնները, սակայն անդամների թիւը դժուար է ասել, որ բոլորովին ճիշտ լինեն—ընտրված 437 պատգամաւորների վերաբերեալ, որ մենք կազմել ենք „Рус. Вѣд.“, „Товарищъ“ և „Рѣчь“ լրագիրներին հետևելով, ուղղելով նրանց թիւերը վերջին օրերս կայացած Սիբիրի ընտրութիւնների տուօծներով։ Նախ՝ որ պատգամաւորների որ կուսակցութեան պատկանելը հաղորդում է հեռագրական գործակալութիւնը «ոսիական տեղեկութիւնների» հիման վրա, իսկ ով կը ցանկանար, ի. Բելյակովնով ասածին պէս (տես „Рус. Вѣд.“, № 246), Տաւրիկեան պալատի տեղ ընկնել Սիբիրի սառնամանիքը. երկրորդ՝ այդ տեղեկութիւններից միայն մի մասը կարող են ստուգել կուսակցութիւնները և մամուլը—յայտնի անձնաւորութիւնների վերաբերեալ, և երրորդ՝ կան անշուշտ «անկուսակցականներ» կամ երեքուն կուսակցութիւնների պատգամաւորներ, որ միայն Դումայում կամ իսկոյն կամ քանի ժամանակամիջոցից յետոյ կը մտնեն այս կամ այն որոշ խմբակի կազմի մէջ... Հէնց գրելուս ժամանակ ինձ բերին մայրաքաղաքի թերթերը, որոնցից երևաց, որ „Рус. Зн.“ աջակողմեաններին հաշուում է յականէ-յանուանէ 183 հոգի. նշանակվածներից ոչ ոք չէ բողոքել։ Սակայն այս բընական վերակազմումը երրորդ Դումայում՝ մեր կարծիքով՝ աւելի սակաւ պիտի նկատվի։ Յունիսի 3-ի օրէնքը ընտրութեան ղեկը տուել է ազնուական-հողատիրական և բուրժուական փոքրամասնութեան ձեռքը, և սրանք գիտէին թէ ում են անցկացնում Տաւրիկեան պալատը. ընտրվածները մեծ մասամբ՝ ռուսի ասած՝ „конченные люди“, որոշ հայեցողութեան տէր մարդիկ են... Ինչպէս տեսաւ ընթերցողը, ոչ մի խմբակցութիւն չէ կազմում մեծամասնութիւն, որ տնօրինէ Դումայի վիճակը. մեծամասնութիւնը հաւասար է 222-ի։ Ուրեմն թէ աջակողմեան-մօնարխիստները tout court, թէ բացարձակ ընդդիմադրականները պիտի յենվեն եւերուն, անկերպարան (գէթ առայժմ) հոկտեմբերականների վրա, որ անցկացնեն այս կամ այն որոշումը։ Ահա ինչ կարևորութիւն են ստանում պատկառելի թիւով ներկայացված հոկտեմբերականները։

Մենք չենք ընդունի ոչ առաջին, ոչ երկրորդ, ոչ չորրորդ խմբակցութիւնները. դրանց էութիւնը պիտի որ պարզ լինի հայ ընթերցողի համար։ «Հոկտեմբերականները» գրեթէ բացակայում էին առաջին Դումայում, կային նրանք բաւականաչափ երկրորդ Դումայում, սակայն մինչև վերջ «սֆինքսի» նմանեցին... Ճիշտ է, նրանք հրատարակած ունեն, ի ցոյց մարդկանց, «սահմանադրական ծրագիր», բայց գործելակերպում, ասածներում մնում են անորոշ. այլ է «հոկտեմբերութիւնը» Ա. Ի. Գուչկովի բերանում, այլ՝ ըստ Կազանի պատգամաւոր Կապուստինի, ուրիշ—Նախկին բիւրօկրատ, սլաւօֆիլների այլասերված, թէև ուղղակի շառաւիղ՝ Ն. Խոմեակովի բերանում. ուրիշ, վերջապէս, հայերին լաւ յայտնի և բարեացակամ դէպի մեզ՝ «Кавказъ»-ի նախկին խմբագիր՝ Ի. Ն. Միլիուտինի կարծիքով. իսկ «հոկտեմբերեան» նահանգական և գաւառական շատ կոմիտէներ, մոռացած հոկտեմբերի հրովարտակը, պարզ թեքվել են «սև հարիւրակներին», «ռուս դաշնակցականներին»։ Յայտնի էմիլյա, որ սրանք բացարձակ յարմարվող են. յուն. 3-ի օրէնքը ճանաչեցին և միայն աւելացրին, թէ դա թելադրված է «տխուր անհրաժեշտութիւնից». մի քիչ առաջ դրանից՝ նոյնպէս երեքուն իշխան Ե. Տրուբեցկոյը սրանց կոչեց «մինիստրութեան վերջին կարգադրութեան հետևողներ... Այդ երկու անուններով նրանք շատ անգամ էլ կոչվում են ռուս թէ անխառն աջակողմեան, թէ բացարձակ ընդդիմադիր մասուլի մէջ։ Միայն Դուման այս անգամ ushպողաբար կը պարզէ «հոկտեմբերեանների» աստառը։ Մենք ֆանատիկոս չենք, ոչ էլ բռնված «սէիդական» անհամբերողութեամբ. միայն մեր խորին համոզմունքն է, որ անկեղծ հոկտեմբերականութիւնը անշուշտ սահմանադրական մի ուղղութիւն է. միայն սահմանադրական ընոյթը սրա մէջ խոր, մինչև լոգիկական ծայրը ոչ հասկացած, ոչ շարունակած է. դա այսպէս ասած «բնակչային» (обывательскій), գեեկացրած սահմանադրական հոսանք է և այդ հոսանքով տարված կարող են լինել շատ ազնիւ, անկեղծ մարդիկ, որոնք սակայն չեն ստացել քաղաքական դաստիարակութիւն։ Սրանք նոր պիտի կրթվեն «սահմանադրական» աւազանում. լաւ է որ կարող են ունենալ իրրև խաչեղբայրներ լուսաւորված կադետներին։ Եւ կադետների այս կարելի դերն է, որ անհանգստացնում է թէ մինիստրութեանը, թէ աջակողմեաններին։

Ի՞նչ են աջակողմեանները—ամենքը գիտեն. բայց թէ ինչ գործելակերպ են սրանք ընտրել երրորդ Դումայի համար՝ դա մենք կը պարզենք հետևեալ յօդուածում, երբ կը խօսենք Դումայի մասին առհասարակ։

Պետրոս Զաքարեան

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Ժողովրդական ազատութեան 5-րդ պատուիրակային համաժողովը կայացաւ հոկտեմբերի 24-ին Հէլսինգֆորսում, տեղական վարչութեան թոյլտուութեամբ։ Համաժողովի նիստը բազմամարդ էր և հէնց առաջին նիստում ներկայ էին 130 անդամներ։ Շատ լրագիրների թղթակիցներ եկել էին ներկայ լինելու այն պայմանով, որ իրանց հաշուները կարող են հրատարակել միայն համաժողովը վերջանալուց յետոյ։ Առաջին օրը նուիրված էր կենտրոնական կոմիտէի հաշուետուութեան, որ կազմված է երկու տարի առաջ և մի տարուայ հաստոր է ներկայացնում։ Հէնց այդ օրն էլ սկսվեցին ագրարային սէկցիայի աշխատանքները։ Երկրորդ օրը նուիրված էր պարլամենտական ֆրակցիայի զեկուցման երկրորդ Դումայում։ Զեկուցանողն էր Հէլսէն։ Ֆրակցիայի կողմից խօսում էին Միլիուկով, Բօգդէվ, Կուտլեր և ուրիշները։ Ֆրակցիայի հաշիւը ենթարկվեց մանրամասն քննութեան։ Մատնացոյց արվեց այս կամ այն սխալների վրա։ Ֆրակցիայի ներկայացուցիչները հէնց իրանք խոստովանվեցին իրանց սխալները և բացատրեցին նրանց ծագումը։

Երրորդ օրը ամբողջապէս նուիրված էր Միլիուկովի զեկուցման երրորդ Դումայի տակտիկայի մասին։ Զեկուցումը որոշում է ընդհանուր ծրագիրը, այն է՝ պաշտպանել ժողովրդական ներկայացուցչութիւնը, օրէնսդրական ինիցիատիվով անցկացնել իրանց պրոգրամը, պաշտպանել ազգանունութեան համար շահաւէտ բոլոր նախագծերը, պաշտպանել նրան կամայականութիւնից և անօրէնութիւնից։ Զեկուցումը շատ վիճաբանութիւններ առաջացրեց։ Նոյեմբերի 27-ին նշանակված են կենտրոնական կոմիտէի ընտրութիւնները։ Հոկտեմբերի 26-ին երկարատև ցոյցեր արվեցին Միլիուկովին։

Հէլսինգֆորսի համաժողովը վերջացաւ։ Ժողովրդական ազատութեան կենտրոնական կոմիտէում ընտրվեցին հետևեալ անձինք. Պետրունկևիչ, իշխան Շախովսկոյ, Մուրոմցէվ, Նաբոկով, Բօգդէվ, Վինավէր, իշխան Պեսար Դոլգորուկով, իշխան Պավէլ Դոլգորուկով, Կոկոշկին, Կիշկին, Տէպլենկո, Կոլիւբակին, Կորնիլով, Կուտլեր, Կիզեվետտեր, Միլիուկով, Զերնէնկով, Սվէչին, Եաբուշկին, Գուլվին, Կոմիսարով, Շերշենեվիչ, Տիրկով, Պրոտոպոպով, Շինգարեով, Մակլակով, Շչեպկին, Լէդնիցկիյ, Վերնատսկի, Ի. Գէսսէն, Վ. Գէսսէն, Պետրաժիցկի, Կոալիարեվսկի, Գրէդէսկիլ, Ֆոն-Ռուտցէվ, Նովգորոդցէվ, Իզգոեվ, Պէրգամէնտ, Սորուվէ և Կամենկի։

✦ Կիրակի, հոկտեմբերի 14-ին, «Սուոմիյա» թատրոնի շինութեան մէջ կայացաւ նախընտրական ժողով։ Դահլիճը լի էր ժողովրդով։ Ներկայ էին 1000-ից աւելի մարդ։ Գուլվին նախագահ ընտրվեց և այդ ընտրութիւնը աղմկալի ծափահարութիւններով ընդունվեց։

Զեկուցում կարդաց Մակլակով, որը մի քանի խօսքերով բնորոշեց կադետների կուսակցութեան ծրագիրը, որը այժմ մնացել է նոյնը, ինչ որ էր և առաջ։ Նա ընդգծեց, որ ներկայումս մեր հայրենիքի ազգային վերածնութիւնը կախված է նրա քաղաքային վերածնութիւնից։ Սակայն քաղաքական և ազգային աղատութիւնը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ խիստ օրինականութիւն է տիրում և երբ վերացված են բացառական օրէնքներ ոչ միայն առանձին տեղերում, այլ և ամբողջ ազգերի վերաբերմամբ, օրինակ լեհերի և հրէաների, որոնց իրաւունքների սահմանափակումը մի բիծ է տիրող ազգութեան խղճի վրա։ Ծայրայեղ ձախակողմի կուսակցութիւնների մի քանի ճառախօսներ առարկում էին զեկուցանողին։ («Еж.»)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Նովորոսիյսկ, 23 հոկտեմբերի

Ամսիս 21-ին, կիրակի օրը, տեղի ունեցաւ տեղիս ս. Աստուածածին եկեղեցու հիմնարկութեան արարողութիւնը և հանդէսը։ Աղօթատան մէջ առաւօտեան պատարագի արարողութիւնը վերջանալուց յետոյ, քահանայական ու հոգաբարձական դասը դիմեց դէպի նոր եկեղեցու տեղը, ուր մի խուռներամ բազմութիւն սպասում էր իրան։ Օրհնութեան ներկայ էին, պաշտօնապէս եղած հրաւէրի համաձայն, քաղաքիս կառավարիչը և կառավարչի օգնականը, քաղաքագլուխը, կառավար. գրասենեակի ընդհ. կառավարիչը, ոստիկանապետը, ռուս քահանայական դասի ներկայացուցիչը և ուրիշ ակնաւոր պաշտօնեաներ ու օտարազգի վաճառականներ, որոնք ամենքն ևս ներկայ գտնվեցին հանդէսին մինչև վերջը, հակառակ այդ օրը փչող խստաշունչ քամու ու տիրող անսովոր ցուրտին։

Հանդէսի համար Եկատերինօդարից մասնաւորապէս հրաւիրված էին նաև երկու քահանաներ, որոնցից միայն տէր-Արսէն քահանան հաճած էր գալ. հրաւիրված էր նաև երգեցիկ խումբը և ծախքերը հոգացված հոգաբարձութեան կողմից. բայց ինչ-ինչ պատճառներով չեկաւ, որով զուրկ մնացինք երգեցիկ խմբին լսելու գեղեցիկ հաճոյքից։ Հանդէսից վերջը ներկայ եղող ամբողջ հասարակութիւնը հիւրասիրվեց առատ մատաղի մսով ու գինով։

Նշանակելի կէտ էր մեր հայ գործաւոր դասակարգի մեծամասնութեան բացակայութիւնը ու ցոյց տուած անբացատրելի անտարբերութիւնը։

Այդ օրը հոգաբարձութիւնը սեղան պատրաստած էր նաև պատուաւոր օտարազգի հիւրերին քաղաքի առաջնակարգ «Օթել-Եւրոպա» հիւրանոցում 60—70 հոգու համար։ Ճաշին ներկայ էին դարձեալ քաղաքի կառավարիչը և միւս հրաւիրեալները, մօտաւորապէս 50 հոգի՝ հայ և օտարազգի յայտնի անձնաւորութիւններ։

Հեռագիրներ ղրկվեցին Վեհափառ Հայրիկին ու Աստրախանի կօնսիստորիային և պ. Մկրտիչ Բաղարսուքովին՝ Եկատերինօդար, ի շնորհակալութիւն իր արած 5000 ռուբլի նուիրատուութեան համար։

Հրաւիրեալները ցրվեցին շատ ուշ ժամանակ ուրախ սրտով ու լաւ տպաւորութիւններով։ Շատ նշանակալից էին ռուս քահանայ հայր Կոստանդին Իզոգովի բաժակաճառերը։

Քաղաքիս հայ փոքրաթիւ գաղութը, որ մի քանի տարիներ առաջ ոչ եկեղեցի և ոչ դպրոց ունէր ու բոլորովին օտարանալու վրա էր, այսօր ունի առժամեայ մի աղօթատուն և երկդասեան ուսումնարան, որ իր երրորդ տարեշրջանի մէջն է գտնվում, և ուսանում են այնտեղ 25—30 երկսեռ ուսանողներ։

Քաղաքումս բաւական ժամանակից ի վեր միտք յղացված էր սեփական եկեղեցի և ուսումնարան կառուցանել, բայց քաղաքապետութեան կողմից տարիներ առաջ յատկացված մի բոլորովին անյարմար հողաբաժնի պատճառով յետաձգված էր շինութիւնը։ Բայց այս տարի, հոգաբարձութեան անդամներից երէցփոխ պ. Արսէն Խոջամիրեանցի ձեռք առած եռանդուն միջոցների ու կարգադրութիւնների շնորհիւ, արդէն քաղաքի ամենանշանաւոր տեղում մի հոդաբաժին յատկացված լինելով, եկեղեցու կառուցման հարցը մասամբ լուծված էր։

Այս առիթով քաղաքիս հայ վաճառականներից պ. պ. Մկրտիչ Բաղարսուքով հինգ հազար, Մկրտիչ Բաղդասարով և տ. Թ. Բաղդասարով հազարական ռուբլի բարեհաճեցին նուիրել անմիջապէս, որով գործի ձեռնարկվեց։

Սրանից շուրջ մի շաբաթ առաջ հոգաբարձութեան անդամներից պ. պ. Ս. Բաղարսուքով, Մ. Բաղդասարով, Ա. Խոջամիրով և Խաչիկով մեկնելով Եկատերինօդար՝ միայն մէկ օրվայ մէջ աջողեցին մօտ 4—5 հազար ռուբլու մի հանգանակութիւն կատարել, որ շարունակվելով քաղաքիս և մօտակայ քաղաքների մէջ ևս, յոյս կայ թէ 20—25 հազար ռուբլու մի գումար գոյանայ և դպրոցի ու եկեղեցու շինութեան ծախքերը փակէ։

Ցոյժ գոհունակութեան և շնորհակալութեան արժանի են տեղիս հոգաբարձութեան և երէցփոխ պ. Արսէն Խոջամիրեանցի ցոյց տուած եռանդն ու գործունէութիւնը եկեղեցական ու դպրոցական հարցերում, որոնց յարատևութիւն և կարողութիւն կը մաղթենք ի սրտէ։

Եգիպտացի

—

Նոր-Բայազէտ, 28 հոկտեմբերի

Նորադուզ գիւղի ցանքսերը, ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, այս տարի ամբողջովին կարկտահար եղան, և թշուառ գիւղացիք ներկայ րօպէում գտնվում են անտանելի դրութեան մէջ։ Այդ գիւղի կանայք, որոնք սովոր են միշտ օգնել թշուառին, ընկածին և իրանց ունեցածից որբերին բաժին հանել, այժմ համարեա թէ բոլորը՝ իրանց երեխաների հետ քաղաք են թափվում ու ամեն մի պատահած մարդուց ողորմութիւն խնդրում իրանց քաղցը յագեցնելու համար։ Շատ անգամ ականատես եմ եղել, թէ ինչպէս այդ դժբաղդները խմբերով արքունական ծառայողներից աղերսելով ողորմութիւն են խնդրել։ «Աղա, սոված ենք. աղա, մեղի հաց». և մի քանի կօպէկ ստանալով իրանց սև բաղդն են անիծել ու հեռացել։ Նորադուզ գիւղը ունի 500-ից աւելի ծուխ, բոլորն էլ հայեր են, որոնք պարապում են միմիայն հողագործութիւնով և չունեն ոչ մի արդիւնաբերական գործարան, ուր այդ երկիրեալ հասարակութեան անդամները կարողանային աշխատել և իրանց սոված գերդաստանին մի կտոր հաց հասցնել։ Եւ այսպէս՝ Նորադուզում կեանքը ձանձրալի է դառել, բնակչութիւնը օրվայ հացը ճարելու համար կորցրել է ամեն յոյս։ Կրթութեան մասին հուսալորդ է խօսել։ Դեռ անցեալ ուսումնական տարվայ ընթացքում այստեղ լուր էր պտտում, որ Թիֆլիսի վաճառական պ. Աֆրիկեան եղբայրները Նորադուզում քանալու են իրանց հաշուով միդասեան երկսեռ ուսումնարան։ Ցանկալի է, որ պ. Աֆրիկեանները այդ գիւղում բաց անէին մի ուսումնարան, ուր կարելի լինէր սովորել մի որևիցէ արհեստ, օրինակ՝ դարբնութիւն, երկրագործական պիտոյքներ շինելու համար, գորգագործութիւն, կամ ուշից պատրաստել թելեր և գործուածքներ։

Նորադուզցիների այսպիսի զրութիւնը չէր կարող վրիպել Նոր-Բայազէտի գաւառապետի ուշադրութիւնից, որը համարեա ամիսը մի անգամ նահանգապետին հաշիւ է տալիս գաւառիս ժողովրդի զրութեան մասին։ Եւ, ինչպէս լսում ենք, նա խնդրել է Երևանի նահանգապետից բաց թողնել մի գումար Նոր-Բայազէտից մինչև Ելենովկա գիւղը պօստային ճանապարհը խճուղով շինելու, որի համար հարկաւոր է առնուազն 80,000 ռուբլի, և մտադիր է այդ ճանապարհի վրա բանեցնել օգնութեան կարօտ անգործ Նորադուզցիներին։

Այս խնդրի դրականապէս որոշումն առաջին՝ մի միջոց է մի կերպ պահպանել Նորադուզցիների գոյութիւնը, երկրորդ՝ ապատել ամբողջ գաւառը այդ ճանապարհի անտանելի չարչարանքներից։ Ահա երթևեկութիւնը արդէն դադարել է, և 4—5 օր է պօստ չենք ստանում ու այսպիսի դէպքեր քիչ չեն պատահում։

Տեղացի

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Ուրբաթ, նոյեմբերի 2-ին, Թիֆլիսի արքունական թատրօնում ներկայացվեց Օբերի «Ֆրադիավօլօ» օպերան։

Դա հին օպերա է, և նրանից է վերցված հայկական «Ով դու բարեկամ» երգի եղանակը։

Այդ Թիֆլիսում յաճախ չէ կրկնվում և ներկայացվում է, երբ հիւր են գալիս Ֆրադիավօլօյի լաւ դեր կատարողներ։

Այս անգամ Ֆրադիավօլօյի դերը կատարում էր Սայեանով, որը թէև ունի լաւ մշակված ձայն, բայց անբաւարար է այդ դերի համար։

Երգչուհի Տուրչանինովա հաճոյք պատճառեց իր գեղեցիկ ձայնով և երգով Ցերլինայի դերում։

Անսամբլը առհասարակ բաւարար էր։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Վաղը քաղաքային դումայի նիստը չի կայանայ, որովհետև քաղաքագլուխը և ձայնաւորներից շատերը մեկնել են Էջմիածին՝ կաթողիկոսի թաղման հանդիսին ներկայ լինելու համար։

✦ Հացթուխները Թիֆլիսում նորից ինքնակամ բարձրացրին հացի գինը. 5 կօպէկի փոխարէն, հացի ֆունտը ծախում են 5½ կօպէկով, այն էլ վատ տեսակի հաց։

✦ Ինչպէս մենք հաղորդեցինք, Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցի վերատեսուչ Պօբէդիմօվի սպանութեան մէջ մեղադրվողներ Պօպովը և Քէսինովը զինուորական դատարանի նոր կազմով մահվան դատապարտվեցին կախաղանի միջոցով։ Այժմ տեղեկանում ենք, որ դատարանը որոշել է միջնորդել Թիֆլիսի ժամ. գեներալ-նահանգապետի առաջ, որ մահվան պատիժը փոխարինվի 15-ամեայ տաժանակիր աշխատանքներով։ Միւս կողմից, դատարանի վճռի դէմ մեղադրեալների պաշտպանը բողոքագիր է ներկայացրել զինուորական գլխաւոր դատարանին։

✦ Կովկասի Փոխարքայի կարգադրութեամբ, քաղաքացիական մասի օգնական սենատոր Մրցկէվիչի նախագահութեամբ, կազմվել է մի յատուկ մասնաժողով՝ Դաղստանի և Զաքաթալայի շրջաններում գիւղացիների՝ բեկերից և կէշկէլատէրերից կախման յարաբերութիւնները կրճատելու հարցով զբաղվելու համար։ Այդ մասնաժողովի պարապմունքները կըսկսվեն նոյեմբերի 6-ին։ Խորհրդակցութեան համար հրաւիրված են տեղական վարչութեան, բեկերի, հողատէրերի և լեզգի հասարակութիւնների ներկայացուցիչները։

✦ Թիֆլիսի ժամ. գեներալ-նահանգապետը կովկասեան զինուորական դատարանին է յանձնել Վանօ Գզուլաշվիլուն, Գեորգի Գելտաշվիլուն, Դիմիտրի Միկէլաձէին, Բագրատ Գիրանաշվիլուն, Նիկոլայ Կօշկաձէին և Վասիլի Սուխիշվիլուն, որոնք մեղադրվում են օգոստոսի 12-ին Ելիշավով հրէաների կրպակը կողոպտելու մէջ։

✦ Այսօր, Զուբալովի ժողովրդական տան մէջ առաւօտեան ժամը 11 և կէսին պ. Ալ. Խատիսեանը կը դասախօսէ ռուսերէն լեզուով «Քաղաքային ինքնավարութիւնների խնդիրները սոցիալական կեանքի շրջանում»։

✦ Այսօր երեկոյեան ժամը 6-ին, Կովկասի Կայսերական Բժշկական Ընկերու-

թեան չէնքում կը կայանայ ժողովրդական ընթերցանութիւն. բժ. Լ. Ս. Օհանջանեանը առաւերէն կը դասախօսէ բակտերիօլոգիայի հիմքերի մասին։ Երեկ. ժամը 7-ին վրացերէն լեզուով բժ. Վ. Ս. Մուսխելովը՝ խօլերայի մասին։ Ընթերցանութեան ժամանակ ցոյց կը տրուին մոգական պատկերներ։ Մուտքը ձրի։ Ամէնքում են երեխաներին չը բերել։

Այսօր, երեկոյեան ժամը 4-ին, գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում կը կայանայ «Муравейникъ» հրատարակչական ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։

Նոյեմբերի 1-ից իր պաշտօնը թողեց Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ ծառայող արխիտեկտոր Կարապետեանը. նրա տեղ նշանակված է տեխնիկ Օհանջանեանը, իսկ սրա պաշտօնը քաղաքային վարչութիւնը վերացնում է։

Երէկ, նոյեմբերի 3-ին, առաւօտեան մօտ ժամը 9-ին, երբ Թիֆլիսի ազնուականների գիմնազիայի 5-րդ դաս. աշակերտ Մ. Դ. Զէրքեզօվը գնում էր գիմնազիա, Ծղնէսակի և Կազբէկակի փողոցի անկիւնում ատրճանակի 2 հարուածով տեղն ու տեղը սպանվեց։ Դնդակները դէպքան գլխին և վզին։ Զարագործները երկու հոգի էին. նրանք փախան Կազբէկակի փողոցով. նրանց ետևից ընկան քաղաքապահները, բայց մարդասպանները նախ մտան Կիրպիչնի միջանցքը, դուրս փախան Կազբէկակի փողոցը, մտան Սօֆիա Բուլտուրիի բակը, իսկ յետոյ բակի միւս դռնից դուրս եկան Գուտիրսկի միջանցքներում։ Սպանութիւնը կատարվել է քաղաքական հողի վրա, որովհետև Զէրքեզօվը Թիֆլիսի ռուս հայրենասիրական ընկերութեան անդամ էր։ Դիակը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը։ Քննութիւն է կատարվում։

Բագուում մահմեդական ազգաբնակութեան մէջ խօլերայով հիւանդանալու դէպքեր վերջին ժամանակներս ստէպ են կրկնվում։ Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, Բագուի քաղաքային վարչութիւնը որոշել է ժամանակաւոր ախտահանիչների թիւը 6-ից դարձնել 8-ը։

Բագուի քաղաքապետը տեղեկացրել քաղաքային վարչութեան, որ, ստացված տեղեկութիւնների համաձայն, Բագուում եւրոպացել է անասունների ժանտախտ, որի պատճառով նա խնդրում է վարչութեան ուղարկել սնանաբոյժ Բիխլովսկուն, հիւանդութեան դէմ միջոցներ ձեռք առնելու համար։

Նոյեմբերի 1-ին Բագուում Անանիա արքեպիսկոպոսը գրել է ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների անունով կառուցվող եկեղեցու առաջին հիմքը, հայ հոգևորականութեան հետ միասին։ Հայրիկի մահված առիթով հանդէսը անցել է անշուք։ Եկեղեցին կառուցվում է Կասպիական փողոցում, Բուդաղեանի նուիրած հողի վրա։ Աշխատանքների վրա հսկում է ինժեներ Քաջունին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երևան, 20 հոկտեմբերի

Ժամանակին ես պատասխանեցի պ. Գ. Աղազադեանի բոլոր հարցերին, բայց ինձանից անկախ պատճառով լոյս չը տեսաւ այդ յօդուածը։ Այժմ կը կրկնեմ իմ պատասխանը։

1) Հինգ հազար ռուբլին բանկերում կուտակված թողնելու համար Աղազադեանը դարձեալ կրկնում է։ Ասացէք խնդրեմ, մթէ յանցանք է, եթէ փոխանակ ստանալու ծախսելու այդ փողը, նախկին հոգաբարձութիւնը աշխատել է ուրիշ աղբիւր գտնելով կառավարել դպրոցը. իսկ 5000 ռուբլին թողել է անձեռնմխելի և յանձնել ապագայ հոգաբարձութեանը։

2) Թոշակագրաւների հարցը, երևի, Աղազադեանը չէ կարդացել կամ թէ գիտութեամբ աղաւաղում է. այդ մասին մանրամասն գրել եմ («Մշակ» № 122)։

3) Մոտավաճառութեան հաշուի մասին նորից է հարց տալիս։ Այդ հաշիւը յանձնված էր ուրիշ հոգաբարձութեան պահելու. պակասած 800 ռուբլի գումարի համար այժմեան հոգաբարձութիւնը, ստանալով մոտավաճառից դրաւական, հարցը փակված համարեց։

4) Գանձարանից վերցված ութսուն հազար ռուբլու հաշիւը ճշտութեամբ գրված է իր տեղում. այդ գումարը, հոգաբարձուներ պ. պ. Ա. Գաբրիէլեանի, Լ. Մուշեղեանի և Լևոն հայր սուրբի հետ միասին նահանգական ատեանից ստանալով ցուցակագրված փաստաթղթերը, որոնց մէջ կային 30,000 ռուբլու թիֆլիսի արժէթղթեր, հանելով գանձարանից՝ պահ տրվեցին Թիֆլիսի առևտրական բանկի Երևանի բաժանմունքում։

5) Ուսուցիչներին տրված ոռճկի մասին կարող է Աղազադեանը դարձեալ կարդալ «Մշակ» լրագրի 122-րդ համարը և հասկանալ։

6) Կառավարութեան մօտ եղած գումարների և արժէթղթերի ցուցակը ներկայացված է ներկայ հոգաբարձութեանը. հետաքրքրվող պ. Աղազադեանը կարող է տեղեկանալ հոգաբարձութեան աղբիւրից։

7) Հրատարակչական ընկերութեան նուիրած գրքերը կարգի բերելու համար գրված է, որ հոգաբարձութեան որոշումով վճարված է քարտուղարին 100 ռուբլի, բայց դա ժողովական սխալի շնորհիւ գտել է 1000 ռուբլի, և մեղաւորը ես չեմ։ Սրանով վերջացնում եմ իմ պատասխանը Աղազադեանին և այսուհետև աւելորդ եմ համարում որևէ մէկի գրութեանը պատասխանելու, որովհետև ոչ ժամանակ ունեմ և ոչ էլ միջոց։ Եւ ի զուր է պ. Աղազադեանը սուտ ու սխալ գրութիւններով մոլորեցնում հասարակութեանը։

Գէորգ Անտոնեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԹՌԻՉՔՆԵՐՍ

(Նամակ Պարիզից)

—

3 Նոյեմբերի (Ն. տ.)

Ֆրանսիացիք ասում են՝ Պարիզը քաղաք չէ, այլ ամբողջ աշխարհ։ Մի վայրկեան և՛ մենք այսպէս ընդունենք։ Հոսին էլ նոյնպէս քաղաք չէր համարվում, այլ մի աշխարհ, սակայն ընկաւ Հոսմը իր զեղխութեան, իր «ուտեին, ըմպեին եւ կանայս առեին»-ի պատճառով։ Կանգուն է առ այժմ Պարիզը և շարունակում է իր «ըմպեին ու կանայս» առնելը։ Վերջինս հասցվել է իր գագաթնակէտին. երևակայել անգամ անհնար է։ Գեղեցկութիւնն ու նազանին կորցնում են իրանց հրապոյրը, երբ շուկային են ծառայում, իսկ Պարիզի կանայք շուկայի ծախու ապրանքի նման հանդէս են դրվում անհամար կաֆէներում, վարիէտեներում, բուլվարներում զանազան քօղերի տակ։ Ո՞վ գիտէ, ինչպիսի քնքոյշ սրտեր են բաղխում այս չքնաղ դիցուհիների կրծքերի տակ։ Ի՞նչն է հարկադրում սրանց այս ուղիով իրանց մի պատառ հացը վաստակելու։ Մթէ սիրուն Ֆրանսիացի կինը յաւիտեան էլ պիտի շարունակէ կոպիտ տղամարդի քմահաճոյքներին ծառայել։ Քմահաճոյքներ, որոնց լսելն անգամ զզուելի, զարհուրելի է։

*

Գերմանիայի բարձր ատիճանաւորների խայտառակութիւնները շատ են զբաղեցնում պարիզցիներին. և այն լրագիրները, որոնք աւելի են նկարագրում խայտառակութիւնները մի ակնթարթում են սպառվում։

Բուլվարների վրա կը տեսնէք անագին մեծութեամբ հանդէս գրված կարիկատուրներ. օրինակ՝ վերևը Վիլհելմը իւրայիններով խայտառակ դիրքերով, վարագոյրի ծայրը քաշած՝ ծերունի Բիսմարկը դիտում է, իսկ նրանից անբաժան իր շունը հոտոտում խայտառակութիւնները։ Ներ քա գործող անձերն են ենթարկված պատժի։ Մի ուրիշ պատկեր. ծերունի Լէօպոլդն է՝ թագը գլխի մի ծայրն ընկած, իրանից անբաժան ձեռափայտին յենված, միւս ձեռքով ալևոր, երկար միրուքը իւրկաներ հագած սագերին յանձնած։ Իսկ կողքին ճանապարհորդական պայուսակը, վրան «դեպի Պարիզ» գրված։ Ուրեմն իրանք պարիզցիք գտնում են, որ Պարիզի հմայքը միայն իւրկաներն են։

*

Պարիզը նոյնն է, ինչ տասը, քսան տարի սրանից առաջ։ Աւելացել են կաֆէներին և ալկոհոլային, ոտի վրա ըմպելի խմիչքների խցերը, աւտօմոբիլները և Լոնդոնի նըման՝ գետնի տակով էլեքտրաքարշը, որ դեռ բոլորովին պատրաստ չէ։

Սկսվել է ձմեռային սեզօնը. բուլվարներում ասեղ գցելու տեղ չէ լինում էկսորսիից յետոյ, մանաւանդ իրիկնադէմերին։ Բնակարանները առաջվայ նման անմաքուր, կեանքն աւելի թանգ միւս քաղաքներից։

Փառահեղ է հայ եկեղեցին, բաւական հաշակով և սիրուն ոճով կառուցված Պարիզի արևնաբիստակրատիկ թաղում։ Քահանան, հ. տէր-Վռամշապուհը, իսկական հայ նահապետական քահանայ, հովւում է իր ծուխը և ժողովուրդն էլ գոհ է նրանից։ Սակայն ժողովուրդ ասացի, բայց այդ ժողովուրդը Պարիզի ժողովուրդ է և Եւրոպայի գաղթականութիւններից (լսածիցս և՞մասամբ դիտածիցս եզրակացնելով) ամենա..., մի խօսքով լաւ չեն...

*

Պարիզումն է այժմս Պողոս Նուբար փաշան։ Տեսակցութիւն ունեցայ հետը. նախ զարթաղցիներիս կողմից ցաւակցութիւն յայտնեցի իր ծնողների մահվան առիթով, յայտնեցի իր երկրորդ հայրենիքում՝ Եգիպտոսում փառահեղ դպրոց շինելուն և Հայկազեան Ընկերութիւն կազմելուն համար, ապա հրաւիրեցի յետ նայել դէպի իր պապերի ծննդավայր, երբեմն հզօր, այսօր կիսաւեր և սգաւոր Ղարաբաղը։ Ցիշեցրի իր հանգուցեալ հօր, մեծ քաղաքագէտ Նուբար-փաշայի փափագը՝ Ղարաբաղի համար մի գործ կատարել։ Մատնացոյց արի սգաւոր հայրենիքի կարիքների վրա, որոնցից ամենահրաժեշտը երկաթուղու գիծը մինչև Շուշի տանելը և այլն և այլն։ Սակայն այս տեսակցութեան մանրամասնութիւնների մասին ուրիշ անգամ։

*

Մեր թշուառ հրապարակախօս Սիմէօն Հախումեանի գերեզմանն, ուղիղ տասն օր այստեղ դէս ու դէն ընկնելուց յետոյ, վերջապէս չորս օր սրանից առաջ, բացառապէս ֆրանսիացի բարեկամներիս և պաշտօնակիցներիս լիուլի աջակցութեամբ, գտայ։ Գերեզմանը գտնվում է Պարիզից մօտ 2 ժամ հեռաւորութեան վրա Villejuif գիւղի մօտ Asile հոգեկան հիւանդների ապաստարանից մի քանի հարիւր քայլ հեռաւորութեան վրա։ Եթէ այս տարի գերեզմանի գտածը մենք չը կորչէր այս գերեզմանը, որովհետև նրա զագաղի վրա կը դնէին մի ուրիշ զագաղ և ապա իւրաքանչիւր երեք տարին շարունակ մի ուրիշ զագաղ։ Մենք վաղուց աշխատում էինք այս գերեզմանի տեղը գտնել, սակայն 8000 ֆրանկ էր պահանջվել։ Այժմս հազիւ նրա շատ փոքր մասով, Ֆրանսիացիների աջակցութեամբ, գործը գլուխ եկաւ։ Պատուիրել եմ նոյն ֆրանսիացիների միջոցով և մի գեղեցիկ յուշարձան, որի նկարը ցոյց տուի Պարիզի ա. քահանային, պ. պ. Մ. Զերաղին, Շիրվանզադէին և ուրիշներին։ Ամենքը գտնում են, որ ոչ միայն գեղեցիկ է, այլ և շատ շքեղ։ Մէկուկէս ամսից գերեզմանի վրա կը դրվի յուշարձանը և նրա լուսանկարի մի օրինակը կը յանձնվի Պարիզի եկեղեցուն, իսկ միւսը ինձ, որ կը ապագրվի։

Այսօր էլ Պարիզի եկեղեցում պատարագ և հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց։ Տ.-Վռամշապուհ ժամարար ա. քահանան սեղանից քարոզ խօսեց, պատմեց ժողովրդին Թշուառ Ս. Հախումեանի կենսագրութիւնը, գործունէութիւնը և հրաւիրեց Պարիզի գաղթականութեան մասնակցել յուշարձանի ծախսերին։

Տ. Նազարեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ա Ն Գ Լ Ի Ա

Պահպանողականների յաղթութիւնը խաղաթղթի ընտրութիւններին.—Անգլիական պահպանողականները մի շարք խոշոր յաղթութիւններ տարան քաղաքային ընտրութիւններին, որոնք այս օրերս տեղի ունէին Անգլիայի և Ուէլսի գաւառական քաղաքներում։ Այդ յաղթութիւնները տարված են թէ ի հաշիւ ազատամիտների և թէ ի հաշիւ բանւորների և սոցիալիստ թեկնածուների։ Իրանց յաղթութիւնների մեծ մասը պահպանողականները տարել են այն քաղաքներում, որոնք պարլամենտական վերջին ընտրութիւնների ժամանակ ընտրում էին ազատամիտ պատգամաւորներ։ Սակայն այդ հանգամանքը չեն վերագրում այն բանին, որ ազատամիտ կառավարութիւնը կորցրել է իր ընտրողների վստահութիւնը։ Դա՝ եթէ կուզէք՝ մի տեսակ պատասխան է երկաթուղիական գործադուլ անելու սպառնալիքին, որ այդ ըէակցիան առաջացրեց սոցիալիզմի դէմ։

Ազատամիտ «Daily Chronicle» լրագիրը խօսելով ազատամիտների և սոցիալիստների պարտութեան մասին, գտնում է, որ դրա գլխաւոր պատճառը սոցիալիզմի երկիւղն է։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ներքին

2 Նոյեմբերի

ՄՕՍԿՎԱ։ Խուզարկեցին «Новь» գրախանութը, կասկածելով որ այնտեղ է հրատարակվում «Борьба» արգելված թերթը։ Ձերբակալեցին 10 հոգու, իսկ խանութը կնքեցին։

Ա բ տ ա ք ի ն

2 Նոյեմբերի

ԲՐԻՍՏՕԼ։ Քէմպբէլ-Բաննէրմանը, որ հիւր էր պատգամաւոր Գաուէլ Դէբիսի տանը, յանկարծ հիւանդացաւ։ Դիշերս Բաննէրմանը ցաւից չը քնեց։ Բժիշկը հիւանդի մօտ մնաց մի ժամից աւել, որից յետոյ հիւանդը մի փոքր թեթև զգաց իրան և քնեց։ Առաջին մինիստրը հոկտ. 31-ին շատ աշխատելուց յոգնեց, որի հետևանքն անքնութիւնն է։ Նրան առաջարկված է պահած մնալ։

ԲՐԵՍՏ։ Ժամանեց ռուսական էսկադրան փոխ-ծովակալ Էբերգարդի հրամանատարութեամբ։

ԲԵՐԼԻՆ։ Պրոֆէսոր Կոխը գիտական ծառայութիւնների համար նշանակվեց իսկական գաղտնի խորհրդական։

ՊԱՐԻԶ։ Ուլմոն խոստովանեց, որ ինքն է այն հեռագրի հեղինակը, որով օտարազգի պետութեան գործակալին առաջարկվում է բանակցութիւններ սկսել։ Մինչև այժմ յայտնի չէ, Ուլմոն կարողացաւ յանձնել փաստաթղթերը, թէ՞ ոչ։

ԲՈՒՏԱՊԵՇՏ։ Պատգամաւորների պալատի նիստը վերջացաւ յուզիչ տեսարաններով։ Խօրվատ պատգամաւորը Բօդիսլավլեվիչը, չը նայած մի քանի անգամ արած նախազգուշացութիւններին, հրաժարվեց (?) և զրկվեց ձայնից։ Խօրվատ պատգամաւորները խիստ կերպով բողոքեցին և սկսեցին աղաղակ և շփոթ բարձրացնել։ Աւելի շատ անհանգիստ պատգամաւորներից չորսին առաջարկվեց բացատրութիւն տալ յատուկ ժամանաժողովին։ Նախագահը նիստը փակեց։ Վերսկսելով, նա ասաց, որ նա միշտ աշխատում էր մտքերը զեկավարել բոլորովին անկողմնապահ. խօրվատ պատգամաւորները ի չարն են գործ դնում նրանց տրված մայրենի լեզուով խօսելու իրաւունքը և թուլացնում են պալատի աշխատանքունակութիւնը։ Կարգապահ մանաժողովը առաջարկեց չորս պատգամաւորներին, որոնք սպառնում էին նախագահին վիրաւորական ժեստերով, ներողութիւն խնդրել։ Պատգամաւորները յայտնում են, որ աղմուկի պատճառով նախագահի նկատողութիւնները չեն լսել։ (Հեռ. Գործ.)

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուվիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕՌՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ
ԶՄԵՌԱՑԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ
(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)
—
ԹԻՖԼԻՍԻՑ
ԲԱԳՈՒ (Գանձակ, Եւլախ)
Արագ—գիշ. 12 ժ. 28 ր., Գանձակ—գիշ. 5 ժ. 42 ր., Եւլախ—առաւ. 7 ժ. 19 ր., Բագու—ցեր. 2 ժ. 43 ր.։ Պօստ.—երեկ. 9 ժ. 41 ր., Գանձակ—գիշ. 4 ժ. 13 ր., Եւլախ—առ. 6 ժ. 27 ր., Բագու—ցեր. 5 ժ. 39 ր.։ Մարդատար—ցեր. 7 ժ 53. ր., Գանձակ—ցեր. 2 ժ. 10 ր., Եւլախ—ցեր. 4 ժ. 21 ր., Բագու—գիշ. 1 ժ. 50 ր.։
ԲԱԹՈՒՄ (Գօրի, Միխայլօվո, Ռիօն)
Մարդատար (№ 7).—առ. 10 ժ. 58 ր., Գօրի—ցեր. 1 ժ. 30 ր., Միխայլօվո—ցեր. 2 ժ. 58 ր., Ռիօն—երեկ. 7 ժ. 21 ր., Բաթում—գիշ. 12 ժ. 10 ր.։ Պօստ.—առ. 9 ժ. 15 ր., Գօրի—ցեր. 11 ժ. 49 ր., Միխայլօվո—ցեր. 1 ժ. 19 ր., Ռիօն—երեկ. 5 ժ. 47 ր., Բաթում—գիշ. 10 ժ. 45 ր.։ Մարդատար (№ 5)—գիշ. 11 ժ. 22 ր., Գօրի—գիշ. 1 ժ. 57 ր., Միխայլօվո—գիշ. 3 ժ. 20 ր., Ռիօն—առ. 7 ժ. 41 ր., Բաթում—ցեր. 12 ժ. 27 ր.։
ԵՐԵՒԱՆ (Ալէքսանդրօպոլ)
Ապր.-մարդ.—ցեր. 3 ժ. 16 ր., Ալէքսանդրօպոլ—գիշ. 2 ժ. 30 ր., Երևան-Ուլուխ. առ. 8 ժ. 22 ր.։ Պօստ.—գիշ. 1 ժ. 8 ր., Ալէքսանդրօպոլ—ցեր. 11 ժ. 53 ր., Երևան—Ուլուխ.—ցեր. 5 ժ. 35 ր., Նախիջևան—գիշ. 12 ժ. 32 ր., Զուլֆա—գիշ. 2 ժ. 35 ր.։
ԲԱԳՈՒՄԻՑ (Պետերբուրգի ժամանակով)
Մարդատար—առ. 4 ժ. արագ.—ցեր. 4 ժ. 4 ր.։ Պօստ.—ցեր. 11 ժ. 23 ր.։
ԲԱԹՈՒՄԻՑ—Մարդ.—առ. 10 ժ. 38 ր.։ Պօստ.—առ. 6 ժ. 49 ր.։ Մարդատ.—ցեր. 5 ժ. 46 ր.։
ԵՐԵՒԱՆ-ՈՒԼՈՒԽԱՆԼՈՒԻՑ — Պօստ. — առ. 1 ժ. 58 ր.։ Ապրանք.-մարդատար—գիշ. 1 ժ. 50 ր.։
ԶՈՒԼՖԱՅԻՑ—Պօստ. գիշ. 4 ժամին։
Մարդ.-ապրանք.—ցեր. 3 ժ. 21 ր.։
ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ — Պօստ. — 7 ժամին։
Մարդ.-ապրանք.—6 ժ. 58 ր.։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
և ուղարկված է բոլոր բաժանորդներին
„ՅՈՒՇԱՐԱՐ“
թատերական-գրական-գեղարուեստական պատկերազարդ երկշաբաթաթերթ № 9.
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. Հայ դերասանական ընկերակցութիւնը 1907—8 յօբելենական թատերաշրջանին.—Դրամայի և բեմի մասին.—Հովիւն ու հովտի շուշանը.—Լոյսն ու խաւար.—Ցօրտաօյի նորօրինակ կարծիքները Զէքսպէ. մասին.—Թատրի ոգին.—Հայկական ներկայացումներ.—Աշխոյ տղայ.—Նիւթեր հայ թատրոնի պատմութեան համար.—Մահագոյժներ.—Էէրման Զուդերման,—Անիի պեղումների առթիւ.—Լուրեր.—Ցայտարարութիւններ։
Շուտով լոյս կը տեսնի № 10, որի մէջ տպվելու է պ. Լէօի մի շատ հմտալից ու շահեկան յօդուածը, որը գրված է յատկապէս «Ցուշարար»-ի համար և պատկերացումն է վեհափառ Հայրիկի ամբողջ գործունէութեան։
«Ցուշարար»-ի բաժանորդագրութիւնը շարունակվում է. 1907/8 թ. բաժնեգինն է 5 ր.։ Նոր բաժանորդները կը ստանան բոլոր լոյս տեսած համարները իրանց յաւելուածներով։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ушаракъ“. 1—1

„ԳՈՒՏԵՆԲԵՐԳ“
գրավաճառանոցում ծախվում է
Հ. ԹՈՒՄԱՆՈՎ
Русско-Армянскій словарь
Գինն է 75 կ. կազմված 1—15
Պօստի ծախքն է 25 կոպէկ
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ „Гутенбергъ“ Г. Галустяну 1—5

ԲԺՇԿԱՊԵՏ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Վերադարձել և վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ բկի, քթի և ականջի հիւանդութիւնների համար։
Առաւօտեան — երկուշաբթի, չորեքշ. և ուրբաթ—11-ից մինչև 1 ժամը։
Երեկոները—ամեն օր—5-ից մինչև 7 ժ.։
Հասցէն՝ Вельяминовская ул. № 3.
(հ. կ. ե.) 3—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵՄԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմեոնովսկի փողոց, № 16։
(ու. կ. ե.) 24—30

ԲԺԻՇԿ
Ս. Մ. ՄՕՆԻՆ
Մասնագէտ՝ սիֆիլիս, վեներական, միզանցքային և կաշու հիւանդութիւնների։ Միզանցքի բորբոքում և ցիստոսկոպիա։ Ցատուկ անալիզներ։ Ընդունելութիւնը առաւ. 8—10 ժ. և երեկ. 5—8 ժ.։ Կանանց և երեխայոց՝ 4—5 ժամը ցերեկվայ։ Միքայէլեան փողոց, № 24, տ. Քարթվելովի, մուտքը Սեմեոնովսկի փողոցից, № 4.
(կ.) 2—4

ԲԺԻՇԿ
Ա. Միխրարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։
(ա. օ.) 39—160

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս աստմոխի եւ աղիքների հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր | 12—1 ժ. առաւօտեան, 5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց ս. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 28—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Վերադարձաւ Կովկասի հանքային ջրերից և վերսկսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդների, առաւօտ. 9—12 ժ., երեկ. 5—7 ժամ։
Միքայէլեան փողոց, № 27։
(հ. հ. շ. կ.) 23—50

Իշխանութեան թոյլտուութեամբ Թիֆլիսում հիմնված է
Ատաղձագործների ՊՐՕՖԷՍԻՈՆԱԼ ԲԻՒՐՕ,
որը վերցնում է ատաղձագործական աշխատանքներ չափաւոր գներով, համեմատ աշխատավարձի, կտորով և օրով. միևնոյն ժամանակ վերջինի գները բաժանված են 4 կատեգորիայի։ Բիւրօն երաշխաւոր է իր անդամների համար միայն այն դէպքում, եթէ պատուէրը տրված է իրան—բիւրօյին։ III քաղաքամաս, Բուսակայա և Վանքսկայա փող. անկիւն, տուն Ներսիսեան դպրոցի, վերին յարկ, ամեն օր ցեր. 7—3 ժամը։
(կ.) 2—8

Շուտով լոյս կը տեսնի
ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻ
„ԻՄ ՊԱՏԱՄԽԱՆԸ“
ԲԱՐՈՅԱՊԷՍ ԸՆԿԱԾ ԵՒ ԱՄԵՆՔԻՑ ԱՐՀԱՄԱՐՀՈՒԱԾԻՆ,
(կ.) 4—7

Լոյս տեսաւ
Ս. ԴԷՄՈՒՐԵԱՆԻ
„ՔՆԱՐ“
երգարանը (եւրոպական նօտաներով)։ «ՔՆԱՐ»-ը բաղկացած է 106 երգ, մեծ մասը ժողովրդական երգերից. գինն է 1 ր.։ Դիմել՝ Баку, Арм. школа, Гимназическая ул., Степану Демурянцу, կամ Моздокъ, С. И. Яралову, և կամ Петербургъ, ред. „Саричъ“, Окрояну. (օ.մ.) 15—30

ՀԱՐԿԱՒՈՐ Է
ԳԻՄՆԱԶԻԱՒԱՐՏ ԴԱՍՏԻՍԱՐԱԿԶՈՒՀԻ,
պահանջվում է իմանալ հայերէն։ Դիմել Батумъ Бр. Мндоянцъ.
(հ. հ. շ. կ. հ.) 4—5

ԳԻՄՆԱԶԻԱՒԱՐՏ
հմուտ վարժուհի ցանկանում է դասեր ունենալ մինչև տասներորդ դպրոցների բոլոր առարկաներից, բացի օտար լեզուներից, փոքրիկ վարձատրութիւնով։ Համաձայն է ինքը յաճախել։ Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը, տիկնոջից։
(ու. շ. կ.) 3—3

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіаковъ съ С-ми. Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.